



Պաշտօնաթերթ ՌԱՄԿԱԿԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿԳՈՒԹԵԱՆ

ՅՈՒՆՈՒԱՐ 11, 2026 Ժ. Տարի, թիւ 2 (457) (Նոր Շրջան), Հիմնուած 1899-ին, իբրեւ «Զայն Հայրենեաց»

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԵՐ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆԵՂԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

(Սուրբ Էջմիածին, 6 յունուարի, 2025 թ.)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:
«Խաւարի մէջ նստած ժողովուրդը մեծ լոյս տեսաւ. եւ լոյս ծագեց նրանց վրայ, որ նստում էին մահուան երկրի եւ ստուերների մէջ»

(Մատթ. 4.16):

Սիրելի հաւատաւոր ժողովուրդ,
Այսօր վերստին Սուրբ Ծննդեան հրեշտակաձայն ւաւետիսն է թելածում մեր եկեղեցիներում, մեր ընտանիքներում: Միասնաբար փառաբանում ենք մեր Տիրոջն ու Փրկչին, Ով ծնունդն է աշխարհի եկաւ մեր փրկութեան համար:

«Խաւարի մէջ նստած ժողովուրդը մեծ լոյս տեսաւ. եւ լոյս ծագեց նրանց վրայ, որ նստում էին մահուան երկրի եւ ստուերների մէջ»: Աւետարանիչը Աստուածորդու Ծնունդը համեմատում է լոյսի ծագման հետ:

Արդարեւ, «խորհուրդ մեծ եւ սքանչելի»: Անժամանակն Աստուած անցաւոր աշխարհի եկաւ: Անձայրածիր տիեզերքը ստեղծողը պարփակուեց մարդկային մարմնում, երկնային գահին բազմողը՝ փոքրիկ ու աղքատիկ քարայրում: Ազգերը հրախրուեցին մեղքը թօթափելու, մահուան խաւարից ելնելու եւ յաւիտենութեան ժառանգորդ լինելու: «Աստուած մարդացաւ, որպէսզի մարդը աստուածանայ», - ուսուցանում են Եկեղեցու Սուրբ Հայրերը: Յիրաւի, Աստծոյ մարդանալը սկիզբն էր մարդու մաքրագործունելու, սրբագործունելու ու աստուածանալու:

Սիրելիներ, Քրիստոսի ուղենշած այս ճանապարհից խոտորուելը աշխարհը դարձնում է անարդարութեան, թշուառութեան ու դժբախտութիւնների թատերաբեմ, ընկղմում մոլորութիւնների խաւարի մէջ, յանգեցնում անձնական ու հասարակական կեանքի խեղման, արժէքների աղաւաղման ու ոչնչացման, որոնց դրսեւորումները տեսնում ենք նաեւ մեր իրականութեան մէջ: Այսօր մեր կեանքում տկարանում են միմեանց հանդէպ հաւատն ու վստահութիւնը, որպէս քաջութիւն է ընկալում անյարգալից ու անգուսպ պահուածքը, խօսքի ազատութիւնը հակադարձում է այլակարծութեան անհանդուրժողութեամբ, բանավէճը՝ վերածում վիրաւորանքների ու վարկաբեկումների, իսկ համրային օգուտը, հայրենամայաստ եւ ազգամուկը ծառայութիւնը ստորադասում անձնական եւ խմբակային նեղ շահերի: Մեր Սուրբ Եկեղեցին շարունակում է ենթարկուել բռնաճշմունցների: Այս իրավիճակը լուրջ հարուած է մեր ազգի ու պետութեան հեղինակութեանը եւ խորը վէրք՝ հասցում համայնքներին ու հաւատացեալներին: Հակառակ անօրինական ու կանոնախախտ գործողութիւնների՝ մեր Սուրբ Եկեղեցին իր բարեպաշտ ժողովրդով ամուր ու անսասան է, հաւատարիմ իր տէրունաշնորհ կոչմանն ու առաքելութեանը: Հայոց Եկեղեցին սուրբ է ու սրբաբարձ՝ հիմնադրուած մեր Տէր Յիսուս Քրիստոսի Սուրբ Թաղէն եւ Սուրբ Բարդուղիմէոս առաքեալների քաղաքներում որպէս «մարդկանց քաւարան, հրեշտակաց բնակարան եւ տուն Աստուծոյ»: Առաքելական մեր Մայր Եկեղեցին պատմութեան հոլովոյթներում ենթարկուել է բազում յարձակումների, անցել սոսկալի նեղութիւնների ու տառապանքների միջով, մարտիրոսուել ու նահատակուել, բայց երբէք յուսահատութեան գերի չի դարձել, քանզի գիտակցել է, որ ճշմարիտ ազատութիւնը եւ փրկութիւնը Քրիստոսին հնազանդուելու, Նրան ապաւինելու մէջ է: Քրիստոսով կեանքը լցում է սիրով ու ողորմութեամբ, ազնուութեամբ ու արդարութեամբ: Քրիստոս ճանապարհն է խաւարից դէպի լոյս, մեղքից դէպի սրբութիւն: Տէրը միշտ հաւատարիմ է՝ փրկելու խոտորումներից ու անկումներից մեղսակորոյս մարդուն, քանզի ինչպէս հռչակում է Եզեկիէլ մարգարէն, Աստուած չի տենչում մեղաւորի մահը, այլ նրա դառնալը չար ճանապարհից եւ ապրելը (18.23): Քրիստոսով մեր առջեւ բացւում է վերշառնումի, հաւատով նորոգութեան ուղին: Ըստ առաքեալների խօսքի՝ Փրկիչը մեր կենդանի Վէմն է, որ կարող է մեզ հաստատուն պահել (հմմտ. Ա Պետ. 2.4, Հռ. 14.24) խռովալոյզ աշխարհի ալեկոծութիւններում: Աստուածորդու փրկարար գործութեամբ է, որ նահանջում են հեծութիւն, մահ ու կործանում, եւ Փրկչի Սուրբ Ծննդեամբ լոյս է ծագում նրանց վրայ, որ նստում են մահուան երկրի եւ ստուերների մէջ:

Սիրելի բարեպաշտ հաւատացեալներ,
Սուրբ Ծննդեան հրեշտակաձայն ւաւետիսը եւ բեթղեհեմեան աստղի լոյսը այսօր էլ բոլոր մարդկանց ուղղումը հրաւեր են Աստծուն ապաւինութեամբ կեանքը վերափոխելու բարիով ու բարիքով, հաստատելու խաղաղութիւն աշխարհում եւ հաճութիւն մարդկանց մէջ: Երկնառաք այս պատգամին ունկընդիր՝ ապրենք ու գործենք Տիրոջ հետ՝ բոլոր բնագաւառներում մեր նախանձախնդիր ու ամբողջանուէր ծառայութեամբ, ի խնդիր անձնական, ընտանեկան

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ս. ԾՆՈՒՆԴԻ ՊԱՏԳԱՄԸ ԲԵԹՂԵՅԵՄԻ ՊԱՏԳԱՄԸ՝ «ԵՂԷՔ ՆՈՐ ՄԱՐԴ»

Եփեսացիներուն ուղղած իր նամակին մէջ, Պօղոս առաքեալ, խօսելով մարդուն հին ինքնութիւնը իր կենցաղակերպով ու մտածելակերպով մոռնալու եւ Քրիստոսով վերանորոգուելու հրամայականին մասին, կոչ կ'ուղղէ ըսելով՝ «Եղէք նոր մարդ» (4.24):

Այս կոչին մէջ է խտացած Աստուծոյ Որդւոյն մարդեղութեան իմաստն ու խորհուրդը եւ իր երկրաւոր առաքելութեան նպատակը: Քրիստոս աշխարհի եկաւ, որպէսզի իր աստուածային պատկերը եղծած մարդուն մէջ վերականգնէ Աստուծոյ պատկերը: Քրիստոս մարդեղացաւ, որպէսզի երկինքէն հեռացած եւ երկրաւորին տիրապետութեան տակ ապրող մարդը դարձեալ վերադարձնէ երկինքին ու երկնայինին: Աստուծոյ Միածին Որդին մարդացաւ, որպէսզի մեղքի ու ապականութեան մէջ խրած մարդը վերամարդացնէ:

Արդարեւ, մարդը վերամարդացնելու Քրիստոսին առաքելութիւնը՝ Բեթղեհեմէն մինչեւ Գողգոթա, հեշտ չեղաւ: Քրիստոս քաղցեց ու հրաշագործեց, հալածւեցաւ ու տազնապեցաւ, խաչէն առաջ խաչը ապրեցաւ եւ իր յարութեամբ նոր մարդը՝ աստուածաստեղծ մարդը վերականգնեց:

Մեծ իրագործումները յանձնառու պայքարով կը կերտուին: Սրբազան նպատակները խաչի ճամբով ու ի պահանջել հարկին արիւնով կը նուաճուին: Այսպէս եղաւ Քրիստոսի ծնունդով նոր մարդուն վերածնունդը:

Բեթղեհեմը սոսկ դէպք մը չէ. ան Աստուծոյ միջամտութեամբ մարդուն վերամարդացման խորհուրդն է, նոր մարդու վերստեղծումը: Բեթղեհեմը միաժամանակ յաւերժական պատգամ մըն է ու հրաւեր՝ դառնալու Բեթղեհեմ ու մասնակից դառնալու անոր յաւիտենական խորհուրդին:

Դառնալ Բեթղեհեմին, կը նշանակէ դառնալ Աստուծոյ հեռացած մարդը Աստուծոյ մօտեցնելու երկնային խորհուրդին: Մօտենալ Բեթղեհեմին, կը նշանակէ մեր կեանքը լեցնել անոր խորհուրդով ու պատգամով: Ընդունիլ Բեթղեհեմի Մանուկը՝ իբրեւ Փրկիչը համայն մարդկութեան, կը նշանակէ քալել դէպի փրկութիւն առաջնորդող Բեթղեհեմի ճամբէն:

Բեթղեհեմը վայր ու դէպք ըլլալէ անդին, «խորհուրդ մեծ» է, Աստուծոյ էջքն է երկիր ու մարդուն բարձրացումը երկինք: Բեթղեհեմը Աստուծոյ ու մարդուն հանդիպումն է: Բեթղեհեմը մարդկային բնութեան իրացումն է Աստուծոյ կողմէ:

Իր Միածին Որդւոյն ծնունդով Աստուած մօտեցաւ մեղաւոր մարդուն՝ զինք մեղքէն մաքրելու, սատանայի ճիրաններէն ազատելու, իր մէջ հին մարդը քանդելու եւ նոր մարդը վերստեղծելու նպատակով:

Արդ, Բեթղեհեմի ճամբով Աստուած դարձաւ Աստուածամարդ՝ աստուածային ու մարդկային բնութիւններու անբաժնելի միութեամբ, ու մօտեցաւ մարդուն՝ մարդուն փրկութեան համար:

Յակոբոս առաքեալ կը յորդորէ. «Մօտեցէք Աստուծոյ, եւ Աստուած ինք պիտի մօտենայ ձեզի» (Յկ 4.8):

Արդեօք մենք պատրա՞ստ ենք մօտենալու Աստուծոյ: Արդեօք մենք պատրա՞ստ ենք Յիսուսը ընդունելու իբրեւ մեր կեանքին միակ ճամբան ու ճշմարտութիւնը, մեր կեանքն իսկ: Պօղոս առաքեալ կը յիշեցնէ. «Անգամ մը, որ նորոգուեցաք, կայ միայն Քրիստոս» (Կղ 3.11):

Արդեօք մենք պատրա՞ստ ենք հաւատքով ու հաւատարմութեամբ ընդառաջելու Բեթղեհեմի պատգամին:

Արդեօք մենք պատրա՞ստ ենք Աստուծոյ Որդւոյն ծնունդով վերածնելու, նոր մարդ դառնալու:

Նոր մարդ դառնալ կ'ենթադրէ ընդունիլ մեր մեղքերը եւ սխալները ու զանոց սրբագրելու կամքը ունենալ:

Նոր մարդ դառնալ կ'ենթադրէ մեր կենցաղակերպը, մտածելակերպն ու գործելակերպը շաղախել Բեթղեհեմէն ճառագայթող արժէքներով ու ճշմարտութիւններով:

Նոր մարդ դառնալ կ'ենթադրէ մեր կեանքին դիմաց ունենալ միայն Քրիստոսը՝ իբրեւ ուղեցոյցը եւ առաջնորդը մեր կեանքին:

Քրիստոսով նոր մարդ դարձած Պօղոս առաքեալ կոչ կ'ուղղէ՝ ըսելով. «Մոռցէք ձեր հին կեանքն ու նախկին գործերը, եւ նոր մարդ եղէք՝ ձեր Արարիչին պատկերին համաձայն նորոգուելով, որպէսզի կարենաք զինք ճանցնալ» (Կղ 3.9-10):

Արդ, նոր մարդ դառնալու համար հրամայական է Բեթղեհեմի խորհուրդը ապրիլ ու անոր պատգամը կեանքի վերածել:

Քրիստոսի հետեւելու ուխտը կատարած մարդը կոչուած է նոր մարդ դառնալու գիտակից յանձնառութիւնը ունենալ եւ անոր հրամայականին հետեւիլ՝ հակառակ չարով ու չարիքով տիրապետուած աշխարհին: Այս է պատգամը Բեթղեհեմին. ա՛յս է յիշեցումը առաքեալին:

Եկէ՛ք, սիրելի՛ հայորդիներ, Բեթղեհեմի խորհուրդով լեցուն այս օրերուն վերանորոգենք Քրիստոսով նոր մարդ դառնալու մեր կեանքի ընթացքը՝ հետեւելով առաքեալի կոչին:

ԹՈՂ ԲԱՐԻՆ ԲԵՐԻ ԱՅՍ ՆՈՐ ՏԱՐԻՆ ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻՆ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

Լեզուներից ամենաբարդը՝ մտածելու լեզուն է: Շատերն այդպես էլ չեն հիշում այն: Իսկ գծին բաժանում է հանճարից մարմինը կապող մի գսպաշապիկ...

2025-ն էլ՝ իր վայր ի վերումներով, լաւ ու ոչ ցանկալի արդիւնքներով, դարձաւ պատմութիւն: Այսօր՝ տարուայ սկզբին, բոլորին մտահոգող հարցերի հարցն է՝ ինչպիսին կը լինի 2026-ը: Հարցերն ու հարցականները շատ-շատ են ու բոլորին ճիշդ պատասխանելը՝ դժուար: Սակայն յստակ է մէկ բան. խորհրդարանական ընտրութիւններ տեղի պէտք է ունենան: Իսկ դա նշանակում է կատաղի մրցավազք եւ անգիջում պայքար իշխանութեան համար: Որը մեր տարափեղկուած հասարակութեան պարագայում սարսափելի հետեւանքներ կարող է ունենալ: Յուսանք, որ այդ սարսափելին չի լինի, որ խելամիտ կը լինենք ու «ծակ շալուարով պարահանդէս չենք գնալ»:



Նախընտրական այս թոհ ու բոհում ակնյայտ է, որ թէ՛ իշխանութիւնը եւ թէ՛ ընդդիմութիւնը ակնդէտ հետեւում եւ աշխատում են ետ չննալ միմեանցից: Անյայտներ շատ կան, բայց պարզորոշ երեւում է, որ երկու կողմն էլ ջանադաբար աշխատում է երկու՝ արտաքին եւ ներքին հարթակներում: Արտաքին դաշտում հիմնականում «փրար վրայ տղայ բերելու» սկզբունքն է գործում: Եւ դա պարզորոշ երեւում է իշխանութիւնների գործողութիւններում: Նրանք անթաքնոյց աչ ու ծախ դիմում են արտաքին ուժերին եւ վերադառնալու համար օգնութիւն խնդրում: Վերջին շաբաթների իրադարձութիւններն էլ շատ յստակ ցոյց են տալիս, որ Թուրքիան, Ատրպէյճանը եւ ԵՄ-ն ձեռք ձեռքի տուած իրականացնում են 2026 թուականի ընտրութիւններում ներկայիս հայկական իշխանութեանը «փրկելու» ծրագիր: Ակնյայտ է, որ ներկայիս հայկական իշխանութիւնների գործերը լաւ չեն եւ արդար ու մրցակցային ընտրութիւններում վերադառնալու որեւէ իրական շանս իշխանութիւնը չունի:

Սա փաստ է եւ որքան էլ ուզում են իրենք իրենց «թաւշեայ դուխ» տան, իրականութիւնը հետեւեալն է. Մարդիկ յոգնել են երկրի հետ տեղի ունեցող հակահայկական, հակապետական, սոցիալական, հոգեբանական եւ քաղաքական *աքսիորդի*, որը կարծես թէ դարձել էր այս իշխանութեան հիմնական «խաղաքարտը»:

Սակայն թուրք-ատրպէյճանական տանդէմի համար հայկական իշխանութեան վերադառնալու ունի առանցքային նշանակութիւն (նրանց համար սա պատմական հնարաւորութիւն է՝ մէկընդմիջ փակելու «հայկական հարցը»), եւ այդ պատճառով որքան մօտեման ընտրութիւնները, այնքան աւելի ուժեղ կը լինի թուրք-ատրպէյճանական տանդէմի աջակցութիւնը «թաւշեայ» իշխանութիւններին: Ուստի մինչեւ ընտրութիւնները եւ՝ Թուրքիան, եւ՝ Ատրպէյճանը ձեռնարկելու են քայլեր, որոնք պէտք է ամրապնդեն հայկական իշխանութիւնների դիրքերը ներհայկական հասարակական դաշտում: Մասնաւորապէս, Թուրքիայի եւ Ատրպէյճանի կողմից կտրուկ կը նուազի Հայաստանի նկատմամբ բացասական հետադարձութիւնը (չնայած պարբերաբար ատրպէյճանցիները չեն դիմանալ եւ կ'իրականացնեն տարատեսակ հակահայկական քայլեր...դէ թուրք են էլի), ինչպէս նաեւ կը ձեռնարկուեն իրական քայլեր՝ Հայաստանի բնակչութեանը մոլորեցնելու թուրք-ատրպէյճանական տանդէմի «խաղաղասիրական մտադրութիւնների» վերաբերեալ: Կարծում եմ՝ ատրպէյճանցիները նոյնիսկ կարող են դուրս գալ Հայաստանի որոշ՝ ռազմավարական տեսանկիւնից ոչ այնքան կարեւոր զաւթած տարածքներից, կ'իրականացուեն ատրպէյճանական վառելիքի եւ ապրանքների մատակարարումներ Հայաստան, իսկ ընտրութիւններին մօտ ժամանակահատուածում Հայաստանին շատ հնարաւոր է նոյնիսկ յանձնել մի քանի գերիներ (բայց ոչ Արցախի ղեկավարութիւնից): Թուրքիան, ամենայն հաւանականութեամբ, կը բացի Հայաստանի հետ սահմանը դիւանագիտական անձնագրեր ունեցող անձանց եւ երրորդ երկրների քաղաքացիների համար: Մի խօսքով՝ Հայաստանի բնակչութեան մոլորեցման գործընթացը կ'ընթանալ աճող թափով:

Սակայն, հայաստանեան իշխանութիւնների կարծիքով, թուրքերի աջակցութիւնը նախընտրական փուլում իրենց բաւարար չի լինելու, եւ ահա տեղեկութիւններ են յայտնուել, որ Հայաստանը Եւրամիութիւնից խնդրել է 2026 թ.

ՍՈՒՐԷՆ Թ. ՍԱՐԳՍԵԱՆ

ՊԳՂ, փրոֆէսոր

պառլամենտական ընտրութիւններին ընդառաջ տրամադրել այնպիսի աջակցութիւն, որը տրամադրուել է Մոլտովային՝ իբր «չարամիտ արտաքին ազդեցութեանը հակազդելու համար»: Այս մասին, ի դէպ, յայտարարել է ԵՄ-ի գլխաւոր «Փաշիստը», նոյն ինքը՝ եւրոպական դիւանագիտութեան ղեկավար Կալա Կալսար: Պէտք է հասկանալ, որ այդ «օգնութիւնը» այս իշխանութիւններին տրամադրուելու է, քանզի ԵՄ-ի համար ծայրայեղ կարեւոր է Ռուսաստանին տարածաշրջանից դուրս մղելը, Թուրքիային եւ Ատրպէյճանին ուժեղացնելը, որպէսզի Կենտրոնական Ասիայից էներգակիրները Եւրոպա հասցընեն՝ շրջանցելով Ռուսաստանը:

Անշուշտ, ԵՄ-ն գիտակցում է, որ թուրք-ատրպէյճանական տանդէմի կախաւորեան պարագայում Հայաստանը ֆիզիկական գոյութեան ապագայ չունի, սակայն դա բնաւ չի խանգարի հենց նոյն ԵՄ-ի աջակցութեամբ Հայաստանի վերածումը «Արեւմտեան Ատրպէյճանի»: Ամենայն հաւանականութեամբ, մոլորական սցենարով մենք ականատես կը լինենք իշխանութիւններին անհաճոյ որոշ կուսակցութիւնների ընտրութիւններին մասնակցելու խոչընդոտների, ձեռքաւորութիւնների, բնակչութեան նկատմամբ տեղեկատուական տեղորի եւ «եւրոպական այլ անակնկալների»: Զուգահեռաբար ԵՄ-ն կը տրամադրի տեղեկատուական աջակցութիւն Հայաստանի իշխանութիւններին եւ ընտրութիւններին մօտ ժամանակահատուածում նոյնիսկ կը յայտարարի Հայաստանի՝ ԵՄ-ի հետ առանց վիզային ռեժիմի յստակ ժամկետների մասին: Այսինքն՝ ընտրութիւնների իշխանական հիմնական զաղափարը կը լինի հետեւեալը. վերադառնալու ներկայիս իշխանութիւնը՝ Հայաստանի քաղաքացիները իբր կը ստանան խաղաղութիւն թուրք-ատրպէյճանական տանդէմի հետ եւ առանց վիզայի ռեժիմ Եւրոպայի հետ: Իսկ եթէ ոչ՝ ապա՝ իբր կը լինի պատերազմ եւ ԵՄ-ի հետ որեւէ մերձեցում չի լինի: Այժմ ողջ յոյսը նրանում է, որ մարդիկ հասկանան՝ իրենց հեքթական անգամ խաբում են, եւ եթէ իշխանութիւններին վարած այս կուրսը շարունակուի 2026 թուականից յետոյ, ապա Հայաստանը անխուսափելիօրէն կը վերածուի «Արեւմտեան Ատրպէյճանի»: Սա է ճշմարտութիւնը՝ դուրսերս գալ թէ ոչ:

Ժողովուրդն էլ՝ տուրք տալով համընդհանուր ընդհարմացմանը, մոռացել է, որ օրուայ իշխանութիւնը հանդիսաւոր կերպով հայ ժողովուրդին խոստացաւ ամէն ինչ անել, որպէսզի Հայաստանը դառնայ Եւրամիութեան անդամ: Ժողովուրդը հաւատաց նրան եւ հաշուի չառաւ, որ դէպի Եւրամիութիւն ճանապարհը պահանջում է մի շարք սկզբունքների խիստ պահպանում: Խօսքի ազատութեան եւ հաւաքների նկատմամբ յարգանք, մասնաւոր սեփականութեան անձեռնմխելիութիւն, ազնուութիւն՝ սրանք պարտադիր պայմաններ են: Այսօր էլ այդ խոստումները շարունակում են: Բայց ի՞նչ ունենք իրականում: 1. Եւրոպական չափանիշների համաձայն, իւրաքանչիւր քաղաքացի իրաւունք ունի արտայայտելու իր անհամաձայնութիւնը իշխանութիւններին: Իրականում սակայն նրանք յայտնում են ճաղերի ետեւում: Սա մտէլ Կարապետեանը, Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւորականները եւ նրանց կողմնակիցները դրա վառ օրինակն են: Սա պարզապէս հիմնարար իրաւունքների եւ ազատութիւնների խախտում չէ, սա ցոյց է տալիս, որ իշխանութիւնները ճիշտ ուղիով շարժուելու մտադրութիւն չեն էլ ունեցել: 2. Եւրամիութեան համար եւս մէկ չափանիշ է մասնաւոր սեփականութեան անձեռնմխելիութիւնը: Սակայն արդէն մի քանի ամիս է՝ նրանք ամէն ինչ անում են, որպէսզի ազգայնացնի «Էներգացանցեր» ընկերութիւնը: Նոյնիսկ Եւրոպայից խիստ դատական կարգադրութիւնը, որն արգելում է մման պահուածքը, նրանց չի կանգնեցնում: 3. Եթէ ժողովուրդը կատարում է ընտրութիւն, ապա ամէն ինչ պէտք է լինի ազնիւ եւ թափանցիկ. այդպիսին է կանոնը Եւրամիութիւնում: Քաղաքացիների վրայ չի կարելի ճնշում գործադրել, նրանց չի կարելի սպառնալ, չի կարելի կեղծել արդիւնքները: Իսկ իրականում ի՞նչ տեսանք Վաղարշապատ համայնքի օրինակով: Ամենակրպիւտ վարչական ճնշման լծակներ եւ բացայայտ խաբէութիւն: Կարճ ասած, իշխանութիւնները եօթ տարի ունէին Եւրամիութեանն ինտեգրուելու իրենց խոստումները իրագործելու համար: Եոթնամեջ ոչ միայն չեն կատարել ժողովուրդի առջեւ ստանձնած պարտաւորութիւնները, այլեւ խայտառակում են Հայաստանի միջազգային հեղինակութիւնը, դաւաճանում փոփոխութիւններ սպասողների վստահութեանը եւ երկիրը թողնում խոստացում եւրոպական ուղում հակառակ իրավիճակում: Ակներեւ է, որ 2026 թուականից յետոյ նոր ամբոխահաճական խոստումներից եւ ճնշման նոյն գործելակերպից բացի ոչինչ չի կարելի սպասել:

(Ծար.ը տեսնել էջ 11)

Խմբագրութեան համակարգող՝	Պոկտ. Արշաիր ԿԵՆՏԵԱՆ (Մոնթրէալ)
Գործադիր խմբագիր՝	Յակոբ Վարդիվառեան (Նիւ Ջըրզի)
Խմբագրական Կազմ	
Յակոբ ԱՆՏԻՔԵԱՆ	(Երեւան)
Պայծիկ Գալայճեան	(Պէյրուս)
Զաւէն Գրիգորեան	(Աթէնք)
Վաչէ Սեմերճեան	(Լոս Անճելըս)
Չափ	
Baikar Association Inc. 755 Mt. Auburn Street Watertown, MA 02472 U.S.A. Website: www.baikarweekly.com E-mail: baikarweekly@gmail.com Tel: 1-201-406-9771 Fax: 1-201-661-8722	

ՀԱՆԳՈՒՅԵԱԿ՝ ՏՈՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆԻ ԵՐԵԿՈՆ...

Յարգելի Տոքթ. Արզումանեան:
Կը գրեմ այս մտորումներս, ուղղուած Ձեզի, յուշ երեկոյէն ետք:



1 Դեկտ. 2025-ի Կիրակի օրն էր: պատահական չէր Կիրակին: Անհունին ստեղծագործութեան 7-րդ օրը երբ ինքն Աստուած հանգիստ առած, խաղաղօրէն եղեմէն Ձեզի հետ մեզ կը դիտէր:

Պատահական չէր, որ այս՝ տեղի կ'ունենար նոյնինք, Ձեր անունով յիշատակուած «Յ. եւ Ս. Արզումանեան» սրահին մէջ: Մանաւանդ երբեք պատահական, երբ Ձեր սիրելի եղբայրը դուկտ. Տէր Զաւէն աւագ քահանան պիտի չփափաքէր այս օրերուն Ձեզ առանձին ձգել:

Ձեր շուրջ հաւաքուած էինք բոլորս, բոլոր սիրելիներդ, կողակից, ընտանիք, հարազատ... հոգետր... իրենց յարգանքը մատուցանելու... կրկին անգամ... ամէն անգամ...:

Յոտնկայս ու դառն լռութեան մէջ կը լսուէր «Il Silencio»-ն կատարողութեամբ տաղանդաւոր Լուսին Ժամկոչեանի:

Մօտ 60 տարիներու Ձեր անփոխարինելի բարեկամ ու գործակից դուկտ. Արշալիր Կէօնճեան իր յարգանքի խօսքը՝ փոխանցեչ ներկաներուն.

«Որպէս անմիջական վկայ, հանգստօրէն է որ կ'արտայայտուիմ, որովհետեւ անցնող բոլոր այդ տարիներուն ընթացքին ուրախ թէ դժուար առիթներով, հասարարական մեր շատ մօտ գործունէութեան ընթացքին, նոյնիսկ ազգային ամենախրթին հարցերը, մենք եղանք բացառաբար համախոհ մեր ունեցած կեցուածքներուն մէջ, միշտ եւ առանց այլեւայլի ի նպաստ մեր ազգի եւ եկեղեցւոյ գերագոյն շահերուն...»:



«...Պարզ խօսքով՝ Տոքթ. Յարութիւն Արզումանեանը իր կառուցողական բանկազին նպաստը բերելով, երկար տարիներով լուսաւորեց անխտիր՝ Հ. Ա. Եկեղեցին, Ռ.Ա. Կ.ը, Թէքէեան Մշակութային Միութիւնը եւ հայ մամուլը:

(Այս կախման երեք կէտերը... յուզումի պահեր էին, երբ ծայրը կը կարկամի, շունչը կը ծանրանայ եւ խօսքերը կը դժուարանան: Դուկտ. Կէօնճեան՝ այն տիտանը, որ հաստատուն կաղնիի մը նման յաղթահարած էր 60 տարիներու անձայրածիր խոչընդոտները, այսօր չէր

կրցած զսպել իր մարդկային յուզումը: Ո՞վ գիտէ անցեալի ի՞նչ յիշատակներ կու գային ալեկոծել իր հոգին, երբ դուք, միասին, ձեռք-ձեռքի միահամուռ կը դիմաւորէիք այդ խոչընդոտները):

Եւ դուկտ. Կէօնճեան փակեց իր խօսքերը՝ «Յարութիւնը տկարանալ չգիտցող, անփոխարինելի պայծառ լոյս մը հանդիսացաւ միշտ, մեր բոլորիս համար:

Այսօր իր բացակայութիւնը շատ ծանր կ'ազդէ թէ հայ աշխարհին մէջ եւ թէ ու մանաւանդ այստեղ մեզ բոլորիս համար»...:

Պրն. Պազգալեան, յարգած իր լռեւայն երդումը, եւ 14 տարիներու իր ներկայութեան առանց ոչ մէկ «ԱՊԱԳԱՅ»ի ընդմիջումին, սատարած է իր խմբագրական պատասխանատուութիւնը:

Ինձի հետ իբրեւ մասնակից Յուշամատենի գաղափարին, կազմումին եւ նախաձեռնութեան, այդ երկար աշխատանքին, ան ներկաներուն հետեւեալ իր մտորումները տուաւ:

«Մոյն Յուշամատենը լաւագոյն միջոցառումն է բոլոր անոնց ովքեր կ'ուզեն լաւագոյն օրինակը առնել անգուղական անձնատրութեան մասին:

Ովքեր՝ որ կը հանդիպին տոյն Յուշամատենին եւ մուտք գործելով կ'ընթերցեն մէջը գետեղուած գրութիւնները, ոչ թէ միայն պիտի ծանօթանան հանգուցեալի ապրած նուիրական կեանքին այլ նաեւ պիտի ոգեշնչուին եւ լաւագոյն օրինակը պիտի ստանան»:

«...Յուշամատենի եւ անոր պատրաստութեան մասին խօսելէ ետք չեմ կրնար չի խօսիլ Տոքթ. Արզումանեանի հետ իմ ապրած յուշերու մասին: Տոքթ. Արզումանեանը առաջին օրէն որ զինք ծանօթացայ, ինձի համար եղաւ դպրոց մը, ուր լրատուական եւ խմբագրական աշխարհի իսկապէս մուտք գործեցի շնորհիւ իր տուած ցուցմունքներուն եւ աշխատանքի ձեւին: Բախտաւորութիւն էր ինձի համար այսպիսի փորձառու անձի մը հետ հանապազօրեայ դրութեամբ գործ ունենալը, սակայն առանց որեւէ նշուածութեան կամ ներդրեան: Շատ լաւ կը յիշեմ իր բերնէն ելած նոյն նախադասութիւնը երբ գրեթէ ամէն օր ժամը 11-ի շուրջ անձայն եւ դանդաղ քայլերով խմբագրատուն մուտք կը գործէր ըսելով. «չի խանգարեմ գործդ» եւ յաջորդ հարցումը որ կ'ուղղէր «Ի՞նչպէս օգտակար կրնամ ըլլալ»:

Հոգեբանական աշխարհի մէջ լռիւ ուսումնասիրութեան քննա է այս մօտեցումը: Դուք կրնաք բացատրութիւններ տալ եւ

ՊԵՐՏ ԳՈԳՈՐԾԱՆ

միայն յարգանքով դիտարկելը»:

«...Ահա սիրելիներ դուք ըսէք թէ Տոքթ. Արզումանեանը ներկայ է կամ ոչ: Ան կը շարունակէ ապրիլ եւ նոյնիսկ սորվեցնել, թէկուզ մարմնով մեզի հետ չէ՝ սակայն հոգիով ներկայ է մեր սրտերուն եւ մտքերուն մէջ եւ այդպէս ալ պիտի մնայ այնքան ատեն որ զինք սիրած եւ յարգած սրտերը կը բարախեն»:

Յուշամատենը հիմնուած է 5 սիւներու վրայ: 1) Ողբացեալին «վերջին բաժանումը», 2) Շատերու «ցաւակցագիրներ»-ու հաւաքածոյ, 3) «Իր ազգային ճանապարհը», 4) «Յորդախոս Գրիչ»ը կը բաժնուի 2-ի՝ ա) «Նշմարներ»ը, բ) «Տարիներու Յօդուածներու Արգասիքէն Նմուշներ» եւ 5) «Երբ Պատկերները Կը Պատմեն»:

Յարգելի Տոքթ. Արզումանեան, շրջապատուած էինք Ձեր սիրելիներով: Ներկայ էին ազնուափայլ Ձեր Տիկ. Սիման, զաւակները՝ Դուկտ. Զաւէնը եւ Տոքթ. Երուանդը, դուստրը՝ Անահիտը եւ նոյնիսկ թոռները:

Որքա՛ն հպարտութեամբ Դուկտ. Զաւէնը յայտնեց վերջերս գտնուած մեծ հօր անձնական Աստուածաշունչը, որուն մէջ արձանագրուած էր ընտանեկան պատմականը:



Տիկ. Անահիտը իր սրտի խօսքերով, որքա՛ն ջերմօրէն բուեց Ձեր արժանիքները՝

«Այս գիրքը միայն յուշերու եւ գրութիւններու հաւաքածոյ մը չէ: Ան արտացոլումն է լուռ, հետեւողական եւ ծառայութեան լեցուն կեանքի մը:

Հայրս բարձրաձայն մարդ մը չէր, սակայն իր բառերով, տարիներու աշխատանքով եւ իր հաստատ ներկայութեամբ, ան դարձաւ այս համայնքի կեանքին մէջ ծանօթ եւ մնայուն ձայն մը:

Գրելը իր կեանքին անբաժանելի մասն էր: Աւելի քան 45 տարի հայրս կը գրէր «ԱՊԱԳԱՅ» թերթին համար:

Ան կը հաւատար, որ մեր լեզուն, մեր պատմութիւնը եւ մեր ազգային արժէքները պահպանելու կենսական նշանակութիւն ունին, եւ այդ հաւատքը ցոյց կու տար լուռ տարիներու ընթացքին, իր գրիչին միջոցաւ:

Ան շնորհակալութիւն յայտնեց նաեւ Դուկտ. Արշալիր Կէօնճեանին եւ Մոնթրէալի Թէքէեան Մշակութային Միութեան նաեւ Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի Կեդրոնական Վարչութեան:

Իսկ Տոքթ. Երուանդ իր խօսքը վերջացուց ըսելով՝ «Վահան Թէքէեան անունը կրող այս շէնքին մէջ, եւ հօրս ու մօրս անունով կոչուած այս սրահին մէջ, մեր ընտանիքը իր անկեղծ շնորհակալութիւնը կը յայտնէ»:

Յարգելի Տոքթ. Արզումանեան կը յիշենք երբ մշակութային երեկոյթներու ժամանակ Դուք լռեւայն կը հետեւէիք յայտագրին անուշ ժպիտով մը եւ մեղմ ձայնով կը քաջալերէիք բոլոր մասնակցողները: Ճիշդ այդ պատճառաւ, գեղարուեստական պատասխանատու Սամուէլ Բէօշկէրեան, պատրաստած էր գողտրիկ յայտագիր մը, երգ՝ Մարինէլա Օհանեան Հոնորոնիքոլաս-ի դաշնակի ընկերակցութեամբ՝ Սամուէլ Բէօշկէրեանի եւ ջութակի նուագ՝ Նառէնի Տէտէանի, դաշնամուրի ընկերակցութեամբ՝ Աննա Սարաճեանի: Բոլորն ալ Ձեր անուշ ժպիտին եւ Ձեր քաջալերանքին արժանի պիտի ըլլային... եթէ...:

* * *

Յուշ երեկոն եւ նորատիպ Յուշամատենի ծանօթացման առիթը փառաւոր կերպով ներկայացուցաւ:

Բոլորս գոհունակ բաժնուեցանք... առանց բաժնուելու Ձեզմէ:

Որքա՛ն արժանի եւ արդար բառեր: Համեստ, ազգանուէր, օրինակելի նուիրածութիւն, ներքին հարստութիւն, գաղափարական սկզբունքներ, խիտ բովանդակութիւն... եւ դեռ... բառե՛ր, որքան արդար եւ արժանի: Իսկ վերջինը՝ բաժանման պահուն՝ «Ձեր հոգին միշտ ներկայ պիտի ըլլայ մեզի հետ»ը:

Հոգի՛ն...:

Հոգի՛ն...:

Սիրելի եւ յարգելի Տոքթ. Արզումանեան. Ձեր հոգի՞ն:

Ես պիտի փափաքէի տակաւին վայելել Ձեր ժպիտը եւ ոչ թէ յիշել միայն, լսել Ձեր ձայնը եւ ոչ թէ մտաբերել, ունենալ Ձեր ներկայութիւնը եւ ոչ թէ Ձեր նկարը եւ վերջապէս շնորհաւորել Ձեզ եւ ոչ թէ յիշատակել...:

Ես ի՞նչ ընեմ հոգիով...:

Մեղա՛յ, եթէ կ'ընդվզիմ ու կը մեղանչեմ... բայց ես ի՞նչ ընեմ հոգիով:

... Աստուած Ձեր հոգին լուսաւորէ:

ՀԱԼԷՊԻ ԵՐԿՈՒ ԹԱՂԱՄԱՍԵՐ

ՇԵՅԽ ՄԱԳՍՈՒՏ ԵՒ ԷՇՐԷՖԻԷ, ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅԵԱՅՔԻՆ ՏԱԿ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» իս

Վերջին օրերու միջազգային լրատուութեանց մէջ առաջնակարգ տեղ գրաւեցին իրարմէ շա՛տ հեռու երկու երկիրներ, աւելի ճիշդ՝ երկու պարագաներ. **Վենեզուելայի նախագահին անհաւատալի առեւանգումը** ամերիկեան զինուորական ջոկատներու կողմէ՝ Գարագասի իր նստավայրէն, եւ... **Հալէպի քրտաբնակ զոյգ թաղամասերու դէմ սուրիական բանակին շրջապահեցող յարձակումը**՝ զանոնք պետութեան վերահսկողութեան վերադարձնելու հիմնական նպատակով:

Բաղդատելի չեն անշուշտ այս երկու պարագաները: Ատոնցմէ առաջինը կը վերաբերի հարաւամերիկեան հարուստ եւ մեծ պետութեան մը ինքնիշխանութեան բացայայտ ոտնակոխումին, մինչ երկրորդ պարագան կը կրէ "ներքին" բնոյթ, սակայն ճակատագրական նշանակութիւն ունի Հալէպի ապահովութեան եւ առհասարակ Սուրիոյ հողային ամբողջականութեան եւ պետութեան գերիշխանութեան տեսակէտէն:

Վենեզուելան, առայժմ, մէկ կողմ թողունք ու մեր հայեացքը սեւեռենք Հալէպի վրայ, ուր ունինք շատ սիրելի ու կարեւոր գաղութ մը, որ մեծապէս տուժեց սուրիական պատերազմէն եւ դեռ ալ կը տուայտի այլաբնոյթ դժուարութիւններու մէջ:

ԻՆՉ ԱՆՑԱՐ-ԴԱՐՁԱՐ ՀԱԼԷՊԻ ՄԵՉ

Սուրիական պատերազմի տարիներէն իվեր (2011-2017), իմանալի ու անհմանալի բազմաթիւ հողովոյթներու եւ խմորումներու հետեւանքով, Հալէպ քաղաքի հիւսիսային գօտիի Էշրէֆիէ եւ Շէյխ Մագսուտ թաղաշրջաններուն մէջ կազմաւորուեցին քրտական զինեալ խմբաւորումներ, որոնք մաս կը կազմէին Ճեզիրէի շրջանը (Հասիէ, Գամիշլի եւ շրջակայք) վերահսկող ու անոր տիրութիւն ընող **"Սուրիոյ Ժողովրդավարական Ուժեր"** պատերազմիկ կազմակերպութեան: Այս կազմակերպութիւնը զինական մէկ թեր կը նկատուի Ա. Էօճալանի գլխաւորած Քիւրտիստանի Աշխատատրական Կուսակցութեան (ԲԱԿ) եւ միշտ հովանաւորուած է Միացեալ Նահանգներու կողմէ, նիւթապէս ու զինւորապէս: Կարելի է ըսել՝ ԲԱԿ-ի սուրիական երկարածոյնն է ան:

Սուրիոյ անկեալ վարչակարգը, պատերազմի թոհուրոհին մէջ, ո՛չ միայն աչք փակած էր Հալէպի մէջ ձեւաւորուող քրտական այս ջոկատներուն գոյութեան եւ տիրապետումին առջեւ, այլեւ, Թուրքիոյ հետ իր ունեցած խորունկ տարակարծութեանց եւ թշնամական տրամադրութիւններու հէնքին վրայ՝ նոյնիսկ քաջալերած էր գնոնք, առիթ տուած՝ որ անոնք հետզհետէ ամրապնդեն իւրեանց դիրքերը, զինուոր ծանր գէներով, նշեալ երկու թաղաշրջանները ամբողջովին առնեն իրենց վերահսկողութեան տակ՝ վարչական, տնտեսական եւ ապահովական գետնի վրայ:

Այս անբնական վիճակը շարունակուեցաւ 12 տարի տեւաբար, մինչեւ որ պատահեցաւ 8 Դեկտեմբեր 2024-ի այն մեծ ու յեղաշրջող փոփոխութիւնը, երբ "Պաաս"-ի 60 տարուան ու Ասատ ընտանիքի միահեծան 50-ամեայ իշխանութիւնը փոխ եկաւ սուրիական զինեալ ընդդիմութեան կրունկներուն տակ (նաեւ՝ շրջանային ու միջազգային տիրական ուժերու համախոհութեամբ) եւ Սուրիոյ մէջ բացուեցաւ նոր ժամանակաշրջան մը:

Սուրիոյ նոր իշխանութեան դիմաց, ներքին ճակատի վրայ, ցցուած էին լուծման կարօտ քանի մը լուրջ հարցեր: Անհանգստութիւններ կային ծովափի շրջանին մէջ (ալաւիքներ), ըմբոստական արարքներ գլուխ կը ցցէին հարաւային Սուէյտաւ նահանգէն ներս (սուրիական բնակչութիւն): Կար անշուշտ, նաեւ, քրտական գործօնը՝ Ճեզիրէի իր տիրութեամբ եւ Հալէպի երկու թաղամասերու բջիջներով:

Անցեալ Մարտին Դամասկոսի մէջ ստորագրուած էր համաձայնագիր մը, որով քրտական ուժերը կը խոստանային միաձուլուիլ սուրիական պետական բանակին հետ ու հրաժարիլ անջատ գործելու իրենց վաղեմի դիտաւորութենէն:

Ամիսները սահեցան, մինչ քրտական կողմը իր այդ պաշտօնական խոստումը չկրցաւ յարգել: Սուրիական կառավարութիւնը կ'ակնկալէր որ գոնէ մինչեւ 2025-ի վերջը այդ համաձայնագիրը կ'իրարկուէր:

Դամասկոս, երկար բանակցութիւններէ ետք, սպառած նկատեց իր համբերութիւնը եւ վերջնագիր տուաւ Հալէպի քրտական զինեալ խմբաւորումներուն՝ հեռանալու նշեալ զոյգ թաղամասերէն:

Քիւրտեր չանսացին այդ օրինաւոր պահանջքին:

Եւ ուստի, պետական բանակը որոշեց զինու զօրութեամբ հարկադրել ապօրէն հրոսակները՝ վերացնելու Հալէպի միասնութիւնը խռովող, բնակչութեան հանգիստը խանգարող այդ անբնական երեւոյթը:

Յունուարի առաջին օրերուն տեսնուող զինական պատրաստութիւնները ենթադրել կու տային արդէն, թէ կացութիւնը պիտի բարդանայ, արիւն պիտի հոսի: Բայց պետութիւնը կը վարուէր չափազանց զգոյշ ու շրջահայեաց: Նախքան ծրագրեալ յարձակումը՝ զոյգ թաղերու բնակչութիւնը կը հրաւիրուէր դուրս գալու այնտեղէն: Յետոյ է միայն, Յունուար 7-ին, որ կը ձեռնարկուէր վերագրաման լայնածաւալ գործողութեան մը:

Մանաւանդ ամսոյս 8-ի բախումները եղան շատ ուժգին: Հրթիռները լուսաւորեցին Հալէպի գիշերային երկինքը՝ ահաւոր դողդիւններով...: Քաղաքը ապրեցաւ պատերազմական նոր ու դաժան փորձառութիւն մը:

Մենք եւս, անձամբ, ակնատես վկան եղանք այդ ահասարսուռ ժամերուն...:

Կ'ակնկալուէր արդէն, որ այս անգամ պետութիւնը վճռական քայլով մը միանգամընդմիջտ պիտի լուծէր Էշրէֆիէ եւ Շէյխ Մագսուտ թաղաշրջաններու կնճռոտ հարցը, որ աւելի քան տասնամեակէ մը իվեր անհանգստութիւն կը ստեղծէր քաղաքին մէջ, կը մտահոգէր մեզ՝ քաղաքացիներս: "Պետութեան մէջ պետութիւն մը" բոյն դրած էր հոն եւ ատիկա գլխացաւանք էր անկասկած: Միշտ կը մտածէինք, թէ ինչպէ՞ս կարելի էր հանդուրժել, որ զինեալ ապօրինի խմբաւորումներ վերահսկեն Հալէպի նման մեծ ու կարեւոր քաղաքի մը երկու ընդարձակ թաղաշրջանները ու "ինքնավարութեան" ցնորամիտ երազներու անձնատուր ըլլան:

Նախկին վարչակարգին օրով այս հարցը ո՛չ միայն չէր լուծուած, այլեւ ստացած էր աւելի՛ լայն տարողութիւն եւ ծաւալ...

Հինգշաբթի, 8 Յունուարի երեկոյեան, սակայն, պետութիւնը իր ամբողջ ծանրութիւնը հրապարակ դրաւ՝ հանգոյցը լուծելու համար: Ռազմավարական շատ խոնհեմ, շրջահայեաց ու սերտուած ծրագրաւորումով մը՝ սկիզբ առաւ այդ թաղամասերը մաքրագործելու պատերազմական մեծ գործողութիւնը: Մեծն Ադեքսանդրի ՍՈՒՐԸԸ պետք էր շողացնէ՝ թնճուկը քակելու համար...: Եւ կարճ

ԼՇՐՈՆ ՇԱՌՈՅՆԱՆ (sharoyanlevon@gmail.com)

Ժամերու ընթացքին, կէսգիշերէն առաջ, արդէն յայտնի դարձած էր, թէ լաւ լուրեր պիտի հասնէին այդ թաղամասերէն: Հալէպի բոլոր մզկիթները տօնական աղօթքներ կը բարձրացնէին, միաժամանակ կը դողանջէին եկեղեցիներու կոչնակները...: Յորդառատ անձրեւ մըն ալ,-- կարծես երկնային օրհնութիւն,-- մաքրեց երկինքն ու փողոցները...: Ամբողջ Հալէպը կը ցնծար, սրտատրոփ կը սպասէր գործողութեանց ելքին, մինչ պաշտօնական աղբիւրներ կ'աւետէին, թէ բանակը արձանագրած էր արդէն իրմէ ակնկալուած յաջողութիւնը:

Անկասկած, բոլորին ցանկութիւնն էր, որ Հալէպը մնար միաձոյլ ու միաբերեւո քաղաք մը: Չըլլային արհեստական բաժանումներ, վերացուէին աւօրինական անցարգելները, գէնք ու զինամթերք արօտելի ըլլային ՄԻԱՅՆ ՈՒ ՄԻԱՅՆ պետութեան՝ ափին մէջ: Այդ ուղղութեամբ, Հինգշաբթի, առնուեցաւ ուրեմն վճռական ու ճակատագրական քայլը:

Սուրիական պետական բանակը իր վերահսկողութեան տակ առաւ Էշրէֆիէ եւ Շէյխ Մագսուտ թաղաշրջաններու կարեւոր հատուածներ ու նեղուց օղակը քիւրտ անջատողականներու շուրջը...:

Պետական շրջանակներ հիմա կ'աշխատին դա՛րձեալ առիթ մը ընծայել զինեալ հրոսախումբերուն՝ հեռանալու Հալէպի իրենց ապաստանարաններէն: Այլապէս՝ ճակատամարտը կրնայ ունենալ իր շարունակութիւնը եւս:

ՅԻՇԵԼՈՎ ՀԻՆ ՇԷՅԽ ՄԱԳՍՈՒՏՆ ՈՒ ՏԱՌՈՒՏԻԷՆ

Շէյխ Մագսուտ եւ Էշրէֆիէ թաղերը, որոնց մասին կը խօսի ամբողջ աշխարհ այս օրերուն, իրականութեան մէջ եղած են հայահաստատ թաղամասեր, հայահոծ եւ հայաշունչ՝ մինչեւ 1960-ական, 70-ական թուականներ:



Եղեռնէն մազապուրծ հայ գաղթականները, որոնք Հալէպ հասած էին ոտաբոյսիկ ու մերկ, շուրջ քսան տարի ապրեցան վրանաքաղաքներու եւ թիթեղածածկ հիւղաւաններու մէջ: 1935-ին, Սուրիոյ ֆրանսական գաղութարար իշխանութիւնները որոշեցին վերացնել այդ քէմփերը, որոնք առողջապահական տարրական պայմաններէ զուրկ էին անշուշտ: Հայերը ստիպու-

ղաբար լքեցին իրենց թիթեղեալ տնակները, սակայն պատեհութիւն ունեցան աժան զինեւրով փոքրիկ հողամասեր գնելու քաղաքին հիւսիսային ամայի գօտիին մէջ: Հայոց այդ նոր կայքերէն մին եղաւ Նոր Գիւղը, բայց նաեւ՝ Շէյխ Մագսուտը եւ Էշրէֆիէն: Հոն կառուցուեցան հայ ընտանիքներու առաջին քարաշէն բնակարանները:

Շէյխ Մագսուտ այդ շրջանին կը կոչուէր **Խորթախ** կամ **Ճեպէ Սէյտ**: Թէ ի՞նչ կը նշանակէր առաջին թրքախունչ բառը՝ չեմ գիտեր: Բայց մինչեւ այսօր, ամէն անգամ որ Շէյխ Մագսուտի անունը տրուի, ես կը յիշեմ տեղույն **Արմէնեան վարժարանը**, որ յետոյ (1956) կոչուեցաւ **Սեդրակ Մեսրոպեան վարժարան**, մտաւ Հ. Բ. Ը. Մ.-ի հովանիին տակ ու այդպէ՛ս ծառայեց շրջանի հայ երեխաներուն մինչեւ 1979: Հոս, երկա՛ր տարիներ, տնօրէնի պաշտօն վարեց հալէպահայութեան քաջածանօթ դէմք, վաստակաշատ դպրապետ պր. Ժիւրայր Իսկէնեան:

Շէյխ Մագսուտի մէջ հայ կաթողիկէները եւս ունեցան դպրոց մը, զոր կը մատակարարէին Անարատ Յորութեան միաբանութեան հայ բոյրերը (մինչեւ 1967):

Էշրէֆիէի պարագան ալ տարբեր չէր: Բարձրադիր այս թաղաշրջանը, այդ հին ժամանակներուն, կը կոչուէր **Տաւտիէ**: Բայց հալէպահայերը, սովորութիւն դարձուցեր էին զայն յորջորջել **Պոյշեիկ Տաղը** (Համայնավարներու լեռ), պարզապէս որովհետեւ հոն բնակողներուն ջախջախիչ մեծամասնութիւնը հնչակեաններ կամ Հնչակեան կուսակցութեան համակիրներ էին...:

Հոս եւս հայերը, որոնց թիւը 400 ընտանիք կը հաշուէր, կառուցեցին քարաշէն բնակարաններ, դպրոց ու եկեղեցի, ունեցան համայնքային աշխույժ կեանք:

Նշանաւոր եղաւ տեղույն **Վարդանեան վարժարանը**, որ գոյատեւեց 1937-1978, մինչեւ թաղին հայաթափումը: Շրջանի հոգեւոր երկարամեայ հովիւն էր Տ. Եղիշէ քինյ. Փանոսեան, որ միաժամանակ տնօրէնն էր դպրոցին (մինչեւ 1960):

Սակայն Էշրէֆիէի փառքը պիտի կազմէր վեներտիկեան **Միսիթարեան հայրերու նորակառոյց հսկայ ու գեղատեսիլ վարժարանը**, որ իր դռները պիտի բանար 1976-ին: Շրջան մը, ան գիրկ բացաւ մինչեւ 800 հայ աշակերտի...: Շրջանի՛կ շրջան: Հոս պաշտօնավարեցին Հ. Եփրեմ Տէր Ղազարեանը, Հ. Արիստակէս Մանուկեանը, Հ. Յարութիւն Պօղիկեանը, Հ. Եղիշէ Ճիւլեանը եւ ուրիշներ:

Այսօր եւս կը գոյատեւէ Միսիթարեանը, սակայն մօտացած աշակերտութեամբ ու երբեմնի իր փառքէն փետրաթափ...:

Շէյխ Մագսուտ եւ Էշրէֆիէ:

Առանձին հատորի մը արժանի երկու հայահաստատ թաղամասեր, որոնք հիմա խօսիլ կու տան իրենց մասին՝ լոյս քրտական գործօնի յիշատակութեամբ...:

Հալէպ



ՍՓԻՒՌՔԻ ԱՆՓԱՌՈՒՆԱԿ ՎԻՃԱԿԸ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՒՆԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

Սփիուքի դասական սահմանումը մօտաւորապէս այսպիսին էր.«Հայոց Յեղասպանութենէն ետք տարագիր հայութեան մնացորդացը պատմական հայրենիքի սահմաններէն դուրս»: Ըստ այս սահմանումին Հայաստանի Առաջին Հանրապետութեան, Խորհրդային Հայաստանի եւ Խորհրդային Միութեան տարածքին հաստատուած հայութիւնը դուրս կը մնային եւ մաս չէին կազմեր **դասական** սփիուքին: Կարգ մը պատմաբաններու կողմէ իրանահայութիւնն ու պոլսահայութիւնը նոյնպէս դուրս կը մնային այս սահմանումէն:

Սփիուքի հայութիւնը զգալիօրէն բազմապատկուեցաւ Յեղասպանութեան հետեւանքով՝ հիմնականին մէջ ներառելով Միջին Արեւելքի եւ միւս ցամաքամասերու հայութիւնը: Կը փորձուիմք համեմատութիւն մը կատարել արեւելեան եւ արեւմտեան սփիուքներու միջեւ եւ անմիջապէս կը նկատենք հիմնական տարբերութիւն մը՝ մինչ Միջին Արեւելքի հայազաղութները երկար ատեն դիմացան՝ պայքարելով ծուլման դէմ՝ պահպանելով ազգային դիմագիծը, արեւմտեան երկիրներու գաղութները, հակառակ թափուած ճիգերուն , մարեցան ազգային գիտակցութիւնն ու հայեցի ոգին: Հայերէնը զգալիօրէն իր տեղը զիջեցաւ տեղական բարբերուն, տիրապետեց տեղոյն լեզուն, հատուկենտ բացուած համեստ դպրոցները գոցեցին իրենց դուռերը: Պատահական չէ որ 1920-ական բուկաններուն գրուեցաւ Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» ուշագրաւ վէպը:



Նահանջի դէմ իրենց ճիգերը չխնայեցին հայկական հիմնարկները՝ եկեղեցին, քաղաքական կուսակցութիւններն ու անոնց հովանաւորած մշակութային միութիւններն ու կազմակերպութիւնները: Այսօր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, Հայ կաթողիկէ եւ Աւետարանական եկեղեցիները **իրենց կարելին** կ'ընեն հայապահպանութեան գծով:

Ո՞ր է արդիւնքը թափուած ճիգերուն:

- Հարցեր կը ծագին միտքիս մէջ.
- ո՞ր է հայ երիտասարդութիւնը, որուն թիւը արհամարհելի չէ յատկապէս հայահոծ Լոս Անճելըսի եւ շրջակայ քաղաքներու մէջ.
 - ինչո՞ւ 24-45 տարեկան երիտասարդութիւնը ներկայ չի գտնուիր զանազան միութիւններու կողմէ կազմակերպուած դասախօսական (մշակութային եւ քաղաքական) ձեռնարկներուն.
 - ինչո՞ւ մեր նոր սերունդները կը խուսափին ձեռնարկներու մասնակցութենէն...: Դեռ կարելի է երկարել մնան հարցումներու շարքը:

Մեր ուսումնասիրութիւններն ու հարցումները, որոնք ուղղուած էին շրջանակիս մէջ գտնուող երիտասարդներուն՝ տուած են հետեւեալ արդիւնքները: Ստացած եմ այսպիսի պատասխաններ, որոնց բացարձակ մեծամասնութիւնը գրուած է **անգլերէն** լեզուով... Եզրակացութիւնը միանշանակ է...

Ահաւասիկ կարգ մը պատասխաններ.

- Ես քաղաքականութեամբ չեմ զբաղիր, քաղաքական եւ կուսակցական նիւթերը չեմ հետաքրքրեր զիս:
- բ.- Միշտ նոյն մարդիկը կը բանախօսեն:
- գ.- Չանձրացուցիչ է եւ ժամերով կը խօսին:
- դ.- Հաճելի չեն (It's not fun.):
- ե.- «Ծանր» կը խօսին, երկար նախադասութիւններ կը գործածեն:
- զ.- Ես հայերէն չեմ գիտեր կամ հայերէնս տկար է: «պէյրութահայերէն» (արեւմտահայերէն) չեմ հասկանում», շատ օտար բառեր (ռուսերէն) կը խառնեն:
- է.- դասերովս կամ գործովս շատ զբաղած եմ եւ գլուխս քերելու ժամանակ չունիմ:
- ը.- Միշտ ցեղասպանութեան մասին կը խօսին:
- թ.- Հաճելի կամ մեզ հետաքրքրող նիւթերու մասին չեն խօսիր...

Փորձենք մտորել այս պատճառաբանութիւններուն» շուրջ:

Նախ՝ զարմացած չեմ տրուած պատասխաններէն, քանի որ լաւ ճանչցած եմ երիտասարդութիւնը մանկավարժութեամբ զբաղած ըլլալու բերումով:

Կ'արժէ այս մասին մտածել եւ խորհրդածել: Փաստ է որ մեր երիտասարդութիւնը քաջատեղեակ է ժամանակակից հաղորդակցութեանց միջոցնե-

րուն եւ մատներու ճապուկ շարժումներով կրնայ տեղեկութիւններ քաղել զինք հետաքրքրող նիւթերու մասին: **Հետեաքար պէտք է մտածել այս առաւելութենէն առաւել չափով օգտուիլ՝ մանաւանդ որ Արհեստական Բանականութիւնը (ԱԲ-ԱԻ) կը յառաջանայ ու կը խորանայ քառասմբակ կերպով:** Ուրեմն, այս հանգրուանին կը մտածեմ արդեօ՞ք նախընտրելի չէ որ մենք՝ երէցներս մօտենանք երիտասարդութեան, հրաւիրենք զանոնք երկխօսութեան, լսենք զիրենք եւ իրենց պրիսմակով նայինք մեր շուրջը եւ ապագային:

Կար ժամանակ, երբ մեր մեծերը, ինչպէս մեր պահպանողական ծնողները, կը փորձէին պարտադրել իրենց աւանդական տեսակէտները: Նոյն երեւոյթը համատարած էր նաեւ դպրոցներուն եւ ազգային-հասարակական-քաղաքական դաշտին մէջ: Յաճախ կը լսէինք. «Դուք տակաւին երեխայ էք (չոճուխ), ձեր խելքը չի հասնիր այս բաներուն...» եւ մնան պապայական կամ տէտէական արտայայտութիւններ:

Կ'արժէ մտածել այն մասին թէ ինչպէ՞ս կրնանք նախ մենքզմեզ փոխել, վերանայիլ մեր մօտեցումները, ուղղակի դիմել իրենց եւ յստակօրէն ըսել թէ մենք մեր տարիքը առած ենք այլեւս եւ նոր գաղթավայրերու մէջ եւ նոր պայմաններու տակ իրենք՝ երիտասարդները պէտք է ստանձնեն սփիուքի նաւաւետութիւնը:

Այս առնչութեամբ իմ զրոյցներս 25-45 տարեկաններու հետ ցոյց տուած են թէ կարելի է ընդհանուր հասկացողութեան գալ: Այս ալ աւելցնեմ թէ մէկ անգամէն հոծ բազմութեամբ գործակիցներ պիտի չունենանք, բայց պէտք է սկսիլ, որովհետեւ եւս 15-20 տարի եւ մենք պիտի չունենանք այս արծաթեայ առիթը:

Կ'առաջարկեմ դիտել Փրոքֆ. Հրաչ Զիլինկիրեանի տեսերիզը: <https://youtu.be/PXhKkspRHHs?si=bmqWfZfTAUksf7gj>

Լոս Անճելըս

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՅԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՍԸ...

(Ծարունակուած Ա. Էջէն)

ու հայրենական կեանքի ապահով ու բարօր ընթացքի: Վճռական լինենք հաստատուն պահելու օրինայարգութիւնը, մերժելու անիրաւութիւնն ու կամայականութիւնը, ատելութիւնն ու քիմախնդրութիւնը, որոնք մեծապէս վնասում ու քայքայում են պետական ու ազգային մեր ներուժը: Մեր առջեւ բացուած է ճանապարհը դէպի Տէրը, դէպի երկնառաք պարգէներ ու յաւիտենութիւն: Այդ ուղիով, տէրունական պատգամների իրագործումով է, որ մեր ժողովուրդը կը յաղթահարի տառապանքների խաւարը, եւ, աւետարանչի խօսքի համաձայն, լոյս կը ծագի մեր կեանքում, մեր նեղութիւնների ու դժբախտութիւնների յաղթահարման ճանապարհին: Արդ, պարգասիրտ հովիւների ու իմաստուն մոգերի պէս անվարան երկրպագենք նորամանուկ Յիսուսին եւ մեր սրտերը բացենք մարդեղացեալ Աստուածորդուն ընդունելու համար: Նախանձախնդիր լինենք Փրկչի պարգէւած շնորհներով վերափոխուելու, որպէսզի ինչպէս Քրիստոս ծնունք եւ դարձաւ մարդու Որդի, այդպէս էլ մենք ճշմարիտ ընթացքով լինենք Աստծոյ որդիներ՝ ըստ առաքեալի խօսքի. «Երբ ժամանակը իր լրումին հասաւ, Աստուած ուղարկեց Իր Որդուն..., որպէսզի մենք որդեգրութիւն ընդունենք» (Գաղ. 4.4-5): Հաւատարիմ մնանք Աստծուց մեզ ընծայուած այս մեծագոյն շնորհին եւ աստուածահաճոյ նորանոր իրագործումներով կերտենք մեր անվտանգ ու ապահով ներկան եւ սերունդների լուսատու գալիքը:

Սուրբ Ծննդեան բերկրալի աւետիսով Մեր ողջոյնն ենք յղում մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրիհան արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալեանին: Ի Քրիստոս սիրով ողջունում ենք քոյր Եկեղեցիների Պետերին՝ հայցելով մարդեղացեալ Փրկչի զօրակցութիւնը իրենց աստուածապատուէր առաքելութեան մէջ: Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում մեր Սուրբ Եկեղեցու ողջ հոգեւոր դասին եւ համայն հաւատաւոր մեր ժողովուրդին ի հայրենիս եւ ի սփիւռս:

Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան յուսառատ այս օրը աղօթք բարձրացնենք առ Փրկիչ մեր Տէրը՝ խնդրանքով, որ խաղաղութիւնը թեւածի ողջ աշխարհում, հայրենի մեր եզերքներում, եւ ապահովութեան ու շէնութեան մէջ հզօրանայ մեր պետութիւնը, բարօրութեան մէջ յարատելի մեր ժողովուրդը: Հայց վերառաքենք հայրենագրկուած արցախահայ Մեր զաւակների տոկունութեան ու ոգու ամրութեան եւ նրանց ոտնահարուած իրաւունքների վերականգման համար: Աղօթենք հայրենեաց պաշտպան զինուորականների, հայրենիքի համար զոհուած մեր քաջորդիների հոգիների հանգստութեան եւ նրանց ծնողների ու հարազատների մխիթարութեան համար: Աղօթենք ապօրինաբար ազատագրկուած հոգեւորականների, ազգային բարերարի ու նուիրեալ հայորդիների, այլեւ գերութեան մէջ գտնուող եւ անյայտ կորած մեր զաւակների համար: Թող Բարձրեալի Սուրբ Աջի պահպանութեան ներքոյ մեր կեանքը լուսատրեալ մնայ աստուածային ներկայութեամբ, զարդարուի հաւատաւոր բարի գործերով, եւ մենք գոհութեամբ փառաբանենք մարդեղացեալ Փրկիչ մեր Տիրոջը այսօր եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

**Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Չեզ եւ մեզ մեծ աւետիս**



ՀԱԽՏՔ ԵՒ ՎԵՐԱՆՈՐԳՈՒՄ

Իրագործումներու Քառորդ Դարաշրջան Նորին Սրբութիւն Գարեգին Բ.

Կաթողիկոսի Հովանաւորութեամբ

Մորին Սուրբ Օծութիւն Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետը կը ղեկավարէ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին 1999-ի Հոկտեմբերէն ի վեր, որպէս, Հայ Առաքելական Եկեղեցւոյ ամենաբարձրաստիճան պաշտօսանտարը՝ Ճայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոս: Աւելի քան 25 տարի ան առաջնորդած է Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռը, վերականգնման, բարեփոխումներու եւ նոր ժամանակներու ալեկոծ յորձանուտներու ընդմէջէն: Իր այս ջանքերուն համար Նորին Սրբութիւնը արժանացած է ոչ միայն աշխարհի տարածքին հայ հաւատացեալներու, այլ նաեւ Սփիւռքի եւ Հայաստանի բազմաթիւ բարերարներու, նուիրատուներու եւ գործընկեր կազմակերպութիւններու վստահութեամբ: Այս հանգամանքը համեմատաբար կարճ ժամանակահատուածի մը մէջ յանգեցուցած է շարք մը նշանակելի նուաճումներու :

Ծնած 21 Օգոստոս 1951-ին, Հայաստանի Արմաւիրի մարզի Ոսկեհատ գիւղին մէջ, աւագանի անունով՝ Կորիճ Գրիգորի Ներսիսեան, հասակ առած է հոգեւոր միջավայրի մէջ, որ կազմաւորած է Եկեղեցւոյ իր նուիրումը: Ընդամէնը 14 տարեկանին ան մուտք գործած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեորգեան Հոգեւոր Դննարանը, ուր սկիզբ առած է իր ճանապարհը դէպի քահանայութիւն:

1970-ին սարկաւագ ձեռնադրուած, իսկ երկու տարի ետք կուսակրօն քահանայ՝ ընդունելով Գարեգին անունը: Աստուածաբանական բարձրագոյն ուսում ստացած է Վիեննայի, Պոննի եւ Մոսկուայի աստուածաբանական ակադեմիաներուն մէջ: Իր ստացած միջազգային կրթութիւնը ընդարձակած է իր աշխարհայեացքը, իր մէջ ձեւաւորելով համաշխարհային տեսադաշտ մը, որ աւելի ուշ պիտի նշանագծէր իր մօտեցումը թէ՛ հաւատքին, եւ թէ՛ առաջնորդութեան: Իր հոգեւոր խորունկ պատրաստութիւնը, լեզուներու տիրապետումը, եւ դիւանագիտական հմտութիւնը, պիտի յատկանշէին իր հետագայ ղեկավարի ոճը՝ որ կը հաւասարակշռէ աւանդապահութիւնը համաշխարհային ներգրաւութեամբ հետ:

«Նորին Սուրբ Օծութիւնը շահեցաւ համարումը եւ վստահութիւնը ոչ միայն համայն հայ հաւատացեալներուն, այլ նաեւ Սփիւռքի եւ Հայաստանի բազմաթիւ բարերարներու, նուիրատուներու եւ գործակից կազմակերպութիւններու, որուն իբր արդիւնք, կարճ ժամանակի մէջ իրականացան բազմաթիւ նշանակալի նուաճումներ»:

1980-ին վերադառնալով Էջմիածին, 1983-ին եպիսկոպոս ձեռնադրուած է եւ նոյն տարին փոխ-առաջնորդ նշանակուած: 1992-ին ստացած է Արքութեան աստիճան: Որպէս հայ եկեղեցւոյ մէջ մեծ վստահութիւն վայելող առաջնորդ, դարձած է Արարատեան Հայրապետական Թեմի առաջնորդը, որ Հայ եկեղեցւոյ ամենամեծ եւ գործուն թեմն էր արդէն անկախ Հայաստանի մէջ: Երանաշնորհ Վազգէն Ա. Կաթողիկոսին եւ ապա Երանաշնորհ Գարեգին Ա. Կաթողիկոսին կողմէ իրեն վստահուեցան Երեւանի եւ շրջաններուն վրայ ընդարձակ հովուական եւ վարչական լիազօրութիւններ:

Փոփոխութիւններու Մարտահրաւերներուն Դիմագրաւումը

Խորհրդային կարգերու փլուզումին յաջորդող դժուար տարիներուն, ինչպէս նաեւ անկախութեան եւ Լեռնային Ղարաբաղի առաջին պատերազմէն ետք, Հայաստանի ժողովուրդը կը դիմագրաւէր կենցաղային դաժան պայմաններ, գուրկ՝ կրթութենէ, ջերմութենէ եւ նոյնիսկ սնունդէ:

1992-ին, Գերշ. Տ. Գարեգին Արքեպիսկոպոսը հոգատարութիւնը ստանձնեց, մօտաւորապէս 1000 թոշակառուներու, որոնք ատենին կ'օգտուէին խորհրդային դարաշրջանի իրաւասութիւններէն, որպէսզի անոնք ապահովուէին սննդաբար տաք ճաշերով եւ հաւաքատեղիներով այն վայրերուն մէջ, որոնք այն ժամանակ կոչուեցան Ապուրի Խոհանոցներ: Գետնի վրայ միջոցներ հաւաքագրելու իր կարողութիւնը, ինչպէս նաեւ Սփիւռքի բարերարներու վստահութեան ձեռք բերումը, կարելի դարձուցին այս սկզբնական նախաձեռնութիւններուն արդիւնաւէտ եւ ազդու ընթացքը: Նման ծրագիրներ ճամբայ հարթեցին նորանկախ Հայաստանի մէջ Եկեղեցւոյ կողմէ իրականացուող առաջին լայնածաւալ մարդասիրական ջանքերուն եւ ապագայ տարիներուն ընդլայնուող ընկերային ծառայութիւններուն համար:

Ան իր հեղինակութիւնը ի գործ դրաւ առաջնահերթութիւն տալու եւ լուծումներ գտնելու պատանիներու ընկերային հրատապ կարիքներուն, որոնք տիրող պայմաններուն բերումով, լքուած էին փողոցային կեանքի: Գարեգին Արքեպիսկոպոս արագօրէն քայլեր առաւ, որպէսզի եկեղեցին ձեռք ձգէ խորհրդային ժամանակաշրջանի Երիտասարդական/Պիոներական Պալատները եւ այդ շէնքերը վերածեց արտադպրոցական կեդրոններու, ուր պատանիները կրնային ապահով միջավայրի մէջ հաւաքուիլ եւ շաղուիլ հայկական մշակութային եւ հոգեւոր կեանքին, ձեռք բերելով կատարողական եւ ձեռարուեստի հմտութիւններ ինչպէս նաեւ ամէն օր առողջ սնունդ ստանալ: 1993 թուականէն սկսեալ տարեկան 3000 ուսանողներ կը գրանցուէին այդ կեդրոններուն մէջ:

«Վեհափառ Տէրը իր առաջնորդող փիլիսոփայութեամբ ձեւաւորած է երկու տասնամեակներու վրայ երկարող ձեռնարկներ, որոնք կը զօրացնեն կապը Եկեղեցւոյ, Հայրենիքի եւ Հայկական Սփիւռքի միջեւ: Տեսիլք մը, որ Հայ Առաքելական Եկեղեցին կը դնէ ազգային կեանքի կեդրոնը, ոչ իբր պատմական մասունք, այլ որպէս հաւատքի, կրթութեան, եւ համայնքային կեանքի գործօն ուժ»:


Այս որոշիչ ժամանակաշրջանին, գիտակից թուային լրատուամիջոցներու ազդեցութեան, ան ներդրում կատարեց զանգուածներուն հասնելու համար, եւ 1995-ին հիմնեց «Շողակաթ» հեռուստաընկերութիւնը Արարատեան Հայրապետական Թեմի գրասենեակներէն՝ երեք հոգինոց անձնակազմով մը: Ծրագիրը միտուած էր քրիստոնէական արժէքներ ներշնչելուն, միաժամանակ լուսաբանելով հանրային եւ ընթացիկ իրադարձութիւնները: Երիտասարդական Կեդրոններուն եւ Ապուրի Խոհանոցներուն կողքին, «Շողակաթ» հեռարձակման հարթակը առաջնահերթութիւն պիտի մնար յառաջիկայ տարիներուն:

Կառուցողական Նախաձեռնութիւններ

1990-ականներուն շարունակուող մարդասիրական եւ ընկերա-տնտեսական կարելոր ծրագիրներուն զուգահեռ, Գարեգին Արքեպիսկոպոսը հասկցաւ, որ յետ-խորհրդային շրջանին հայկական աւանդութիւնները եւ կրօնական կեանքը վերականգնելու համար անհրաժեշտ էր մատչելիութեան բարելաւում: Երանաշնորհ ՆՍՕՏՏ Վազգէն Ա.-ի եւ ապա Երանաշնորհ ՆՍՕՏՏ Գարեգին Ա.-ի կողմէ իրեն վստահուած նախագիծերէն էր Երեւանի մէջ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի կառուցումը, որուն շինարարութիւնը սկսաւ 1997-ին: Տաճարը պիտի ըլլար Հայ Առաքելական Եկեղեցւոյ ամենէն մեծ Մայր Տաճարը աշխարհի մէջ, որ իրագործելի դարձաւ Սփիւռքէն ստացուող շարունակական նուիրատութեանց շնորհիւ:

1999-ին Կաթողիկոս ընտրուելէ ետք, ՆՍՕՏՏ Գարեգին Բ.-ի առաջին տարիները նշանաւորուեցան եկեղեցական ենթակառոցներու անմախաղէպ ընդլայնումով մը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սեփականութեան տարածքը քառապատկուեցաւ, մօտաւորապէս 40 նոր կամ վերանորոգուած շէնքերով, որոնք վերափոխեցին պատմական համալիրը, ի լրումն բազմաթիւ եկեղեցիներու, տաճարներու եւ հոգեւոր դպրանոցներու Հայաստանի եւ Արցախի մէջ:

Ամենակարելոր ծրագիրներէն էին Սուրբ Տրդատ Բաց Խորանին ստեղծումը, որ կառուցուեցաւ 1500 հաւատացեալներ տեղաւորելու համար Հայաստանի քրիստոնէութիւնը որպէս պետական կրօնք ընդունելու 1700-ամեակին, ինչպէս նաեւ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարին վերանորոգումը: Եօթը տարուան տեւողութեամբ Մայր Տաճարի վերանորոգումը, որ UNESCO-ի Համաշխարհային ժառանգութեան վայր է, ներառեց կառուցուածքային ամրապնդում, զմբէքի խաչին փոխարինումը եւ իւղանկարներուն ու որմնանկարներուն վերականգնումը, որոնք վնասուած էին ժամանակի պատճառով կամ ծածկուած էին խորհրդային դարաշրջանին քսուած ներկի բազմաթիւ շերտերով: UNESCO-ի հսկողութեան ներքեւ իրականացուող այս ծրագիրը միջազգային համակարգուած ջանք էր, որ միաւորեց բազմապիսի նուիրատուներ եւ աջակիցները:



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար

Միաբանական նոր կացարաններ, գրադարաններ եւ կրթական կեդրոններ, ինչպէս՝ Վաչէ եւ Թամար Մանուկեան Մատենադարանը եւ Գարեգին Ա. Հոգեւոր Կրթական Կեդրոնը, առաւել հարստացուցին Էջմիածնի հոգեւոր եւ մտաւոր կեանքը: Բարերարներու առատաձեռնութեամբ, հիմնական նորոգութիւններ վերափոխեցին կարելոր կառոյցներ, ինչպէս՝ Ալեք եւ Մարի Մանուկեան Գանձատունը, Խրիմեան թանգարանը, Հին Վեհարանը, Ռուբէն Սեւակի թանգարանը եւ ճեմարանականներու համար նախատեսուած հանգստաւէտ հանրակացարանները: Այս կառոյցները, ի միջի այլոց, պիտի ապահովէին, որ Էջմիածինը մնայ սրբազան միջավայր մը եւ ուսման ու ծառայութեան կենսունակ կեդրոն մը, ինչպէս նաեւ դրական ազդեցութիւն ունենայ հոգեւորականներու կրթութեան եւ կառավարման կարողութիւններու զարգացման ուղղութեամբ:

Ներքին Հիմքերու Ամրապնդում

Ֆիզիքական ընդարձակումէն անդին, Նորին Սուրբ Օծութիւնը աշխատեցաւ զօրացնել եկեղեցական կառավարման ներքին կառոյցները: Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի կանոնաւոր նիստերու գումարումը թէ՛ Էջմիածնի մէջ եւ թէ՛ արտասահմանեան թեմերուն մէջ, զօրացուց միասնութիւնը եւ պատասխանատուութիւնը: Այլ մասնագիտացուած խորհուրդներ եւ յանձնախումբեր, ինչպէս՝ Միաբանական Խորհուրդը, Վերաքննիչ եւ Կարգապահական յանձնախումբերը եւ Դարտարապետական ու Հրատարակչական Խորհուրդները ստեղծուեցան եկեղեցական վարչութիւնը մասնագիտացնելու համար: Եպիսկոպոսական եւ Եկեղեցական-ներկայացուցչական Ժողովներու վերահաստատումը երկար դադարէ մը ետք, նշեց հաստատութեանական մասնակցութեան եւ թափանցիկութեան նոր դարաշրջան մը:

Իբրեւ Գերագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս իր գահակալութեան առթիւ, Գարեգին Բ.-ը խոստացաւ վերակառուցել Եկեղեցւոյ կրթական եւ հովուական հիմքերը, վերակազմակերպելով ճեմարանները, ներմուծելով քահանաներու համար արագացուած վերակազմաւորումի ծրագիրներ եւ

ՀԱԽՏՐ ԵՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

(Ծարունակում 6-րդ էջին)

ստեղծելով երիտասարդական ծառայության եւ քրիստոնէական կրթութեան նոր բաժանմունքներ: Նպատակ ունենալով ներգրաւել քահանաներու նոր սերունդ մը, Նորին Սուրբ Օծութիւնը որդեգրեց հոգեւորական դաստիարակութեան արդի աշխարհի գործելաոճը: Իր հսկողութեան տակ, երկու հիմնական ճեմարաններ՝ Գէորգեանը եւ Վազգէնեանը, վերաշխուժացուեցան, ինչպէս նաեւ նախաձեռնուեցան միջազգային համալսարաններու մէջ բարձրագոյն կրթութեան աստիճաններու համար կրթաթոշակներու նոր ներդրումներ:

Վեհափառին առաջնորդութեան ներքեւ, Գէորգեան Հոգեւոր Դեմարանը պետական հաւատարմագրում ձեռք բերաւ 2002-ին, լիակատար ճանաչում ստանալով իբրեւ բարձրագոյն կրթական հաստատութիւն 2005-ին, համապատասխանեցուելով եւրոպական բարձրագոյն կրթութեան չափանիշներուն 2007-ին: 2016-ին, ճեմարանը ճանաչում ստացաւ որպէս յետ-համալսարանական եւ դոկտորական կրթութիւն իրականացնող աստուածաբանական կեդրոն:



Կրթութիւնը միշտ ալ առանցքային տեղ ունեցած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի Հայ Եկեղեցւոյ վերաբերեալ տեսլականին մէջ՝ սկսեալ Գէորգեան Հոգեւոր Դեմարանին համար պետական հաւատարմագրում ապահովելէն մինչեւ զայն լիարժէք եւ միջազգայնօրէն համապատասխանեցուած աստուածաբանական հաստատութեան մակարդակի բարձրացնելը:



Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետը կը հանդիպի պատանիներու հետ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ:

Սեւանի Վազգէնեան Դպրանոցը նմանապէս զօրացուցած է իր դիրքը՝ տրամադրելով բարձրագոյն մակարդակի դարձնալով եւ հասցնելով հոգեւորականներու եւ գիտնականներու նոր սերունդներ: Նոր կրթական կեդրոններ, ինչպէս Թրփանճեան Աստուածաբանական Բոլէճը՝ Հառիճի վանքին մէջ, հիմնադրուած 2012-ին, եւ Գարեգին Ա. Հոգեւոր Կրթութեան Կեդրոնը, բացուած 2018-ին, դարձան կարեւոր կառոյցներ քահանայից վերապատրաստման եւ մտաւոր փոխանակումներու համար: Բացի այդ, Վեհափառ Հայրապետը հնարաւորութիւն պիտի ստեղծէր, որպէսզի ակադեմական կարողութիւն ունեցող երիտասարդ հոգեւորականները կարենային ուսանիլ բարձր հեղինակութիւն վայելող հաստատութիւններու մէջ, ինչպիսիք են Օքսֆորտի Համալսարանը, Հռոմի Գրիգորեան Պապական Համալսարանը կամ Լուվէնի Համալսարանը Պելճիքայի մէջ, ուր անոնք ոչ միայն որակեալ կրթութիւն կը ստանան, այլ նաեւ տարբեր մշակոյթներու հետ կը ծանօթանան: Աշխարհիկ միջավայրերու մէջ տեղաւորումներով, անոնք աւելի լաւ կրնային տեսնել աշխարհը ժողովուրդի տեսանկիւնէն: Աւելի քան 300 երիտասարդ հոգեւորականներ օգտուած են այս պատրաստութենէն: Ներկայիս Հայ Առաքելական Եկեղեցւոյ մէջ ծառայող 54 եպիսկոպոսներէն 41-ը կրթուած եւ ձեռնադրուած են 1999 թուականէն առդին:

Աշխոյժ գործունէութեամբ յատկանշուող «Շողակաք» հեռուստաալիքին զուգահեռ, ներդրումներ կատարուած են Հայ Եկեղեցւոյ պատմական աղբիւրներու հրատարակութիւնները եւ թուային ծրագրերու մատչելիութիւնը ընդլայնելու համար: Մայր Աթոռի Հրատարակչական Բաժանմունքը, որ մեկնարկած է 2006-ին, դարձած է օտար լեզուներէ թարգմանութիւններու եւ դասական հայերէնի, ինչպէս նաեւ եկեղեցագիտութեան, հայագիտութեան, մեկնաբանութիւններու, քրիստոնէական բարոյագիտութեան եւ ուսուցողական գրքոյկներու հրատարակման կարեւոր հաստատութիւն մը: 2012-ին, առաջին անգամ ըլլալով, Մայր Աթոռը հրատարակեց Սուրբ Գրիգոր Նարեկացիի «Մատենանոյ»

քերգութեան»-ի արդի հայերէն եւ դասական հայերէն հրատարակութիւնները: Աւելի քան 30,000 օրինակ վերահրատարակուեցաւ եօթը տարուան ընթացքին:

Բանակի եւ Բանտերու Հոգեւոր Սպասարկութիւն

Ինչպէս ամրագրուած է 1995-ի Հայաստանի Սահմանադրութեան մէջ, Ձինւած Ուժերու հոգեւոր ծառայութիւնը 1997-ին վստահուեցաւ Հայ Եկեղեցւոյ: 1999-էն սկսեալ բազմաթիւ զօրամասերու գրադարանները հարստացան հոգեւոր գրականութեամբ, ներառեալ՝ Սուրբ Գիրքի օրինակները, «Էջմիածին» պարբերաթերթը, «Քրիստոնէայ Հայաստան» Մայր Աթոռի երկշաբաթեայ թերթը, ինչպէս նաեւ զանազան հոգեւոր գրքոյկներ եւ աղօթագիրքեր: Ձինուորական մատուցներու թիւը շարունակեց աճիլ, եւ հոգեւորականներու խումբ մը, որպէս զնդերէցներ, սկսան ծառայել Հայաստանի բանակին հոգեւոր ծառայութեան կառոյցներուն մէջ, ներառեալ՝ ամուսնացած եւ կուսակրօն քահանաներ եւ սարկաւազներ: Հայաստանի ուղղիչ հիմնարկներու համար Կաթողիկոսը հիմնեց Բանտերու Հոգեւոր Տեսչութիւնը: Այսօր քրեակատարողական հիմնարկներու մէջ գտնուողները հայ հոգեւորականութեան կողմէ կանոնաւոր հոգեւոր սպասարկութիւն կը ստանան:

Մարդասիրական Աջակցութիւն

Մայր Աթոռի «Հաւատքով Կառուցենք» նախաձեռնութեան միջոցով 2008-ին, աւելի քան 100 բնակարաններ կառուցուած են Հայաստանի կարիքաւոր ընտանիքներու համար, ներառեալ՝ պատերազմէ եւ բնական աղէտներէ տուժածները: Մայր Աթոռը նաեւ աջակցած է անվճար բժշկական օգնութեան՝ Իզմիրլեան Բժշկական Կեդրոնին միջոցով, որ լիարժէք գործող հիւանդանոց մըն է, նաեւ օգնութիւն ցուցաբերած է վիրատուր զինուորներուն եւ հոգեւորականներուն, ներառեալ՝ զգալի դրամական միջոցներ յատկացնելով արտերկիր ուղարկուածներուն, անոնց տեղադրման համար: Բանտարկեալներուն եւ անոնց ընտանիքներուն տրամադրուած են նաեւ հովուական եւ նիւթական օգնութիւն:



Վեհափառ Հայրը COVID-19 համավարակի ժամանակ, Իզմիրլեան Բժշկական Կեդրոն կ'այցելէ իր օրհնութիւնը տալու վիրատուր զինուորներուն

Նորին Սուրբ Օծութիւնը նաեւ գլխաւորեց կրթական հաստատութիւններու հիմնադրումը, ինչպէս՝ Էջմիածնի Էտուարտ Էօրմէքեան վարժարանը (2009) եւ Երեւանի Գեորգ Էմինի անուան աւագ դպրոցը (2014), որոնք երկուքն ալ կը խթանեն բարոյական եւ հոգեւոր արժէքներով ներծծուած ակադեմական գերազանցութիւնը: Մայր Աթոռը նաեւ կը գործարկէ բազմաթիւ զիշերօրիկ դպրոցներ եւ պատանեկան տուններ (Հայորդեայց Տուններ) Աշտարակի, Կիւմրիի, Վանաձորի եւ Երեւանի մէջ, ուր աւելի քան 60,000 կարիքաւոր երեխաներ կրթութիւն եւ խնամք ստացած են:

2014-ին, Վեհափառ Տէրը հիմնեց Մայր Աթոռի Ընկերային Ծառայութիւններու Գրասենեակը, մեկնարկելով լայնածաւալ մարդասիրական ծրագիրներ, որոնք կ'աջակցին գաղթականներուն, տարեց սերունդին, տեղահանուած ընտանիքներուն, հաշմանդամութիւն ունեցող անձանց եւ կարիքաւոր երեխաներուն:

Վերջին տասնամեակը յատկանշուեցաւ յաջողական եւ պատմական ճգնաժամներով, որոնք լուրջ մարտահրաւէր հանդիսացան Հայ Եկեղեցւոյ առաջնորութեան՝ մարդասիրական օգնութեան գործին մէջ էական դեր ստանձնելու ուղղութեամբ: Հայաստանի մէջ COVID-19 համավարակէն եւ 2020-ի Արցախեան Պատերազմէն ի վեր, Մայր Աթոռի Ընկերային Ծառայութիւններու Գրասենեակը զգալիօրէն աւելի մեծ թիւով նիւթական օգնութեան ծրագիրներ իրականացուց, քան իր սովորական դրամական օժանդակութեան ծրագիրները՝ խոցելի ընտանիքներուն եւ անհատներուն:

Համաշխարհային Հասանելիութիւն

Վեհափառ Հայրապետը շարունակեց եկեղեցւոյ միջոցով մշակութային դիւանագիտութիւն վարելու հարուստ աւանդութիւնը, զորս Հայ Առաքելական Եկեղեցիին յատուկ եղած է, համաշխարհային պատմութեան մէջ Հայ ազգի եւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ վայելած եզակի դիրքին շնորհիւ: Իր պաշտօնավարման կարճ տարիներուն ընթացքին, ան կազմակերպեց Յովհաննէս Պօղոս Բ. Պապի աննախադէպ այցը անկախ Հայաստան 2001-ի Սեպտեմբեր 26-ին: Էջմիածնի մէջ, Պապը մասնակցեցաւ Հայաստանի մէջ Քրիստոնէութեան պետականօրէն ընդունման 1700-ամեակին նուիրուած տօնակատարութիւններուն եւ Վեհափառ Տէրին հետ ստորագրեց համատեղ հռչակագիր մը՝ դատապարտելով 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւնը: Վատիկանի հետ յարաբերութիւնները պիտի շարունակէին ծաղկիլ Ֆրանչիսկոս Սրբազան Քահանայապետին հետ իմաստալից ներգրաւուածութեամբ, որ նույնպէս այցելեց Սուրբ Էջմիածին, իսկ վերջերս՝ Լեւոն Դ. Պապին հետ, Հռոմի մէջ:

ԹՈՐՈՍ ՔՈՐՔՄԱԶԻ

«ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐԲԻՈՅ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ (1975-2017)» Աշխատությունը

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԻՍԿԱՀԱՏԵԱՆ

«Պայքար» շաբաթաթերթի հրատարակությունը, նախապես ներկայացուցած էինք հայ-թրքական առնչության մասին ուսումնասիրություններ, որոնք կ'իյնան նախքան Մեծ Եղեռնեան ժամանակաշրջանին մեջ: Չուիցերիոյ Զիրիխի Համալսարանը ուսանած Թորոս Քորքմազ ընտրած է հայ-թրքական յարաբերությունները նորագույն ժամանակներուն նիւթը եւ զայն ուսումնասիրել ետք ներկայացուցած է իբրեւ իր դոկտորական թեզը՝ «Հայերը Թուրքիոյ Հանրային Կեանքին Մէջ (1975-2017) Հրանդ Տինքի եւ «Ակօս»ի Պարագաներու Ուսումնասիրութիւնը» վերնագրով, Զիրիխի Համալսարան, Չուիցերիա, 2021, 548 էջ, անգլերէն («The Armenians in Turkey's Public Life (1975-2017) Case Study: Hrant Dink and Agos», Zurich University, 2021, 548 p.):

Ուսումնասիրութիւնը կ'ընդգրկէ անդրադարձ մը Հրանդ Տինքի մասին, որուն համար հեղինակը՝ Թորոս Քորքմազ կ'ըսէ. «Հրանդ Տինք իր ամբողջ կեանքը նուիրեց հայ եւ թուրք ազգերու միջեւ խաղաղութիւն հաստատելու համար եւ Թուրքիոյ ժողովրդավարութեան հասնելու ընթացքը յաջողցնելու» (էջ VII):

Թորոս Քորքմազ 1976-ին Թուրքիա ծնած հայ մըն է: Ան կ'ըսէ թէ իր մման ուրիշ հայերու պէս ստիպուած էր խորականութեան եւ մեկուսացման դիմանալ: Սակայն վերջապէս ան համարձակութիւնը ունեցած է այդ ուղղութեամբ բան մը ընել այդ հարցը լուծելու համար: Երբ ան Պոլսոյ կեդրոնէն 20 թլմ. հեռու Սարքեարի իրենց տան առջեւ ընկերներով կը խաղար, լսած էր «կեափուր» բառը բազմիցս անգամներ: Կեափուր թրքերէն կը նշանակէ անհաւատ: Թուրքերը կը գործածէին այս բառը ստորացնելու համար ոչ-իսլամները: Նոյն այդ փոքրիկ թուրք մանուկները յաճախ կը հարցնէին Թորոսի թէ իսկապէս իրենք տան մէջ մե'րկ կը քալեն: Ասկէ կըրնանք հետեւցնել թէ թուրքերը հայոց մասին կը մտածէին իբր անառակ եւ մոլորած մարդիկ, որոնք զարտուղի կեանք մը կը վարէին:

1980-ական թուականներուն թրքական ձայնասփիւռը լուրերու ընդմէջէն յարատւօրէն կը շեշտէր հայ վրիժառուներու (իրենք կը կոչեն ահաբեկիչ) հայկական ազգութիւնը: Թորոս Քորքմազ յանգամ մը գործած ըլլալու զգացումը կ'ունենար երբ ամէն անգամ պատմութեան ուսուցիչը կ'ըսէր, թէ հայերը դաւաճանութիւն գործած են եւ թուրք ազգը կռնակէն դաշունահարած Ա. Համաշխարհային պատերազմի ընթացքին: Ծարունակելով իր խօսքը Թորոս Քորքմազ կ'ըսէ. «Աւելի ուշ ուսանեցայ Չուիցերիոյ Զիրիխի քաղաքի համալսարանը «Միջազգային Յարաբերութիւններ»ու ճիւղին մէջ, արարտեցի երկրորդ յառաջադէմ ու փայլուն կարգով, սակայն չուզեցի աշխատանքի ասպարէզ ընտրել ծննդավայրիս՝ Թուրքիոյ մէջ, հայկական ծագումիս պատճառով: Երբ թրքահպատակ այլ հայերու հետ կը խօսիմ խորականութեան եւ առանձնացումի նիւթերուն շուրջ, անոնք նոյն բանը կ'ըսեն ինծի (էջ 10):

Թուրքիոյ մէջ դժբախտաբար, ոչ միայն հաւասարութիւն չկայ օրէնքի առջեւ, այլ նաեւ հայերը չեն կրնար բացէ ի բաց խօսիլ առկայ անարդարութեան եւ յետցնցումային հայոց ողբերգութեան մասին, կ'ըսէ հեղինակը աւելցնելով թէ ան Պողազիի համալսարանին մէջ դոկտորական թեկնածու էր, մեծ դժուարութիւններ ունէր հայկական հարցի վերաբերեալ թէզ մը ներկայացնել, հակառակ այն իրողութեան որ համալսարանին մէջ կային դասախօսներ, որոնք արդէն կը ճանչնային Հայոց Յեղասպանութիւնը (էջ 11):

Թուրքիոյ մէջ մինչեւ օրս Հայաստանութիւնը կամ Հայկական Հարցը արծարծելը բացառիկ արգելքներու կը հանդիպէ եւ իշխանութիւնը զայն բանադրանք կը նկատէ: Այս պատճառով Թորոս Քորքմազ իր դոկտորական թեզը Չուիցերիոյ Զիրիխի քաղաքի համալսարանին մէջ կը ներկայացնէ:

Թուրքիոյ մէջ հայերը մասնաւոր ուշադրութեան կեդրոն դարձան ԱՍԱԼԱ-ի (Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակ-ի օտար լեզուներով յայտաւումը) զինեալ գործունէութենէն, ինչպէս նաեւ Հայաստան-Ատրպէյճան Արցախի շուրջ հակամարտութենէն ետք 1990-2000-ին: Հայոց վրայ այդ մասնաւոր կեդրոնացում-ուշադրութիւնը գորացած է նաեւ Հրանդ Տինքի երկլեզու (հայերէն եւ թրքերէն) «Ակօս» թերթի հրատարակութենէն ետք:

1980-ականներուն Թուրքիոյ Էօզալի վարչապետութեան տարիներուն Թուրքիոյ մթնոլորտը սկսաւ մասամբ ժողովրդավարական դառնալ: Հիմնուեցան անձնական նախաձեռնութեամբ ռատիոկայաններ եւ հեռատեսիլի կայաններ, որոնց միջոցով սկսան արծարծուիլ եւ խօսուիլ ամէն տեսակի նիւթեր, մանաւանդ «բանադրելի» քաղաքական հարցեր, ինչպէս Հայկական հարցն ու Հայաստանութիւնը: Վերջապէս 1990-ականներուն սկիզբը Թուրքիա-Եւրոպա մերձեցումով օրէնքները աւելի ժողովրդավարական դարձան: Թուրք եւ հայ մտաւորականներ սկսան խօսիլ հայկական գաղութին ընկերային հարցերուն, անոր դժուարութիւններուն եւ լուծումներուն շուրջ: Վերջապէս նաեւ արծարծուեցաւ Հայաստանութեան հարցը հայ եւ թուրք մտաւորականներու շրջանակին մէջ:

Հեղինակը թրքական իշխանութեան մասին բացայայտօրէն հետեւեալը կ'ըսէ. «Ինչպէս որ Թրքական Հանրապետութեան սահմանադրութիւնը կը շեշտէ թէ պետութիւնը զուտ թրքական է, այդ թրքական պետութիւնը բարոյապէս չէզոք չէ: Գործնականին մէջ ան ոչ-չէզոք դիրք կը բռնէ ի նպաստ թուրքին» (էջ 12):

Թուրքիա ստապատիր պատմագրութիւն մը շինած է, որ հայոց տառապանքներուն ու զոհերուն թիւը կը նսեմացնէ մեծ տարողութեամբ, միեւնոյն ատեն քաջալերելով խորականութիւնն ու հայատեացութիւնը:

Պոլսոյ մէջ երբ «Ժամանակ» եւ «Նոր Մարմարա» թերթերը միայն հայերէն լոյս կը տեսնէին, 1990-ականներու վերջերէն անոնց կողքին սկըսաւ «Ակօս» թերթը հրատարակուիլ թէ՛ հայերէն եւ թէ՛ թրքերէն: Հրանդ Տինք իբրեւ Թուրքիոյ քաղաքացի հաւասար աչքով կը դիտէր թրքական եւ հայկական հարցերը: Ան կը ճգնէր Հայոց Յեղասպանութեան թրքական ճանաչում ապահովել ու միեւնոյն ատեն Թուրքիոյ մէջ կատարեալ ժողովրդավարութիւն հաստատել տալու ջանք կը թափէր, կ'ըսէ Թորոս Քորքմազ:

2009-ին թրքական «Սարը Կելին» ժապաւէնը երեւան հանց Հայաստանութեան վերաբերեալ տարակարծութիւններ հայոց եւ թուրքերու միջեւ: Ժապաւէնը ուղղակի հայելին էր թրքական եւ ատրպէյճանական ուրացումներու եւ հերքումներու շարքին, ինչպէս նաեւ կը ցոյացնէր թրքական յետամնաց միտքը այս առնչութեամբ:

«Ակօս» շաբաթաթերթը ազդեցութիւն կը գործէր թէ՛ Թուրքիոյ հայկական գաղութին եւ թէ՛ թուրք հասարակութեան ու վերնախաւին վրայ: Հրատարակութեան սկզբնական շրջանին շատ զուսպ էր Հայաստանութեան վերաբերեալ իր կարծիքներուն մէջ, սակայն հետզհետէ աւելի խիզախ դարձաւ: Ան լայն տեղ կու տար պետութիւնը քննադատող կարծիքներուն, յօդածներուն եւ գաղափարներուն ու հետզհետէ զարգանալով այդ մարզին մէջ բացայայտօրէն յայտնեց Հայոց Յեղասպանութեան իր ճանաչումը: Հրանդ Տինք դարձաւ հանրութեան մտաւորականը, սիրուած հազարաւոր թուրքերու կողմէ: Անոր գրութիւնները մեծ ազդեցութիւն կը գործէին Թուրքիոյ հանրային կեանքին վրայ:

Ըստ Թորոս Քորքմազի ապօրինի կազմակերպութիւն մը թրքական պետութեան կարգ մը պատասխանատուներուն հետ գործակցաբար սպաննեց Հրանդ Տինքը, որ ցնցած էր թրքական պաշտօնական բանադրանքը հայոց դէմ, առանց որեւէ զիջում կատարելու հայկական համայնքի իրաւունքներէն, մանաւանդ պահպանելով Հայաստանութեան փաստին անժխտելիութիւնը: Ոճիքին հեղինակները չէին ակնկալէր որ աւելի քան 200 հազար քաղաքացիներ պիտի քալէին Հրանդ Տինքի դագաղին ետեւէն իր յուղարկատրութեան:

1970-էն ի վեր առաջին անգամ ըլլալով 2002-ին կը նկատուի, թէ Թուրքիոյ կողմէ Հայաստանութեան ուրացումն ու հայ համայնքի իրաւունքներու անտեսումը նուազած են: Հայկական գաղութի զաւակներուն ներդրումը թրքական հանրային կեանքին մէջ աւելցած է նաեւ Հրանդ Տինքի ջանքերով:

Թրքական Խորհրդարանին մէջ Հայոց Յեղասպանութեան ճանաչումը «Ժողովրդի Ժողովրդական Կուսակցութեան» (HDP- People's Democratic Party) կողմէ, քաջալերեց ներկայ ժամանակաշրջանին բազմաթիւ փոքր ծախակողմեան կուսակցութիւններ եւ կազմակերպութիւններ անոր հետեւելու:


Վերջապէս գոյութիւն ունին երկու ազդակներ որոնք նպաստած են հայոց վիճակին բարելաւման Թուրքիոյ մէջ: Առաջինը՝ Եւրոպական Միութեան պարտադրած օրէնքները որոնք աստիճանաբար կը սկսին կիրառուիլ Թուրքիոյ մէջ: Երկրորդ՝ քրտական յեղափոխական շարժումները որոնք կը խթանէին թուրք պատասխանատուները աւելի զգոյշ վարուելու հայոց պարագային:

Վերոյիշեալ ազդակները բաւական քաջալերանք տուած են Հրանդ Տինքի գործունէութեան, որ հայ թէ թուրք յառաջդիմական ընկերներուն հետ իմնեց առաջին հայկական ռատիոկայանը՝ «Նոր Ռատիօ» անունով, ինչպէս նաեւ Նոր Զարթօնք կազմակերպութիւնը:

Իբրեւ հետեւանք վերոյիշեալ նուաճումներուն, քաղաքական ծիրին մէջ Թուրքիոյ հիմնական կուսակցութիւնները, Էրտողանի գլխաւորած Արդարութիւն եւ Զարգացում՝ ԱԺԲ եւ գլխաւոր ընդդիմադիր Հանրապետական Ժողովրդային Կուսակցութիւնը՝ ՍՀՓ, փոխեցին իրենց քարացած կեցուածքը հայոց հանդէպ եւ դարձան աւելի ըմբռնող ու թոյլատու: Միայն ծայրայեղ աջակողմեան կուսակցութիւնները կառչեցան իրենց յամառ կեցուածքին:

Այս աշխատութիւնը կարելի է այն առումով, որ լոյս կը սփռէ վերջին տասնամեակներու ընթացքին հայ-թրքական առնչութիւններուն վրայ, եւ որ կ'արժեւորուի ներկայիս Հայաստան-Թուրքիա դիւանագիտական յարաբերութիւններու ստեղծման գործընթացին մէջ:

Պէյրութ



ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՄՏԸ - ՏՈՒՆ ՄԸ, ՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ԱՊՐԻՆ

(Ծաղունակուած նախորդ թիւէն)

Յիշատակուած այս բոլոր տեղանունները, ուրկէ տարագրուած էր հայութեան այս մնացորդացը, յիշողութեան մէջ ապրեցուց իր ծննդավայրը, զայն սերունդէ-սերունդ աւանդեց եւ ստեղծեց այն ամուր կռուանը, որու հիմներուն վրայ հաստատուեցաւ Հայ դատի եւ պահանջատիրութեան հաւաքական գիտակցութիւնը: Այս երեւոյթը կը հիմնուի յիշողութեան անխորտակելի ուժին վրայ, որ կը կերտէ ինքնութիւն, կը ստեղծէ համախմբում եւ կենդանի կը պահէ անցեալը, որպէսզի ան կարենայ ուղեցոյց հանդիսանալ ապագայի համար:

Արդարեւ, հեղինակի առկայ յուշագրութեան զխաւոր ատաղձը Թոմար-զան է, Կեսարիոյ մարզի հայաբնակ բնակավայրերէն մին, ուր իրենց աչքը լոյսին բացած էին հեղինակին հայրն ու մայրը: Երկուքն ալ շառաւիղներ մին Մարկոսեան, միւսը Անտոնեան ընտանիքներու, իրենց ծնողաց եւ տարագիր քիւրաւոր հայերու հետ քալելով դժոխքի բախողներէն եւ միայն հրաշքով,– երբ իրենց ընտանիքի անդամներէն շատեր կը մահանան սովէ, տարատեսակ հիւանդութիւններէ, հիւծումէ եւ թուրք ժամտարմաներու գործած ոճիւրէն,– կը հասնին Լիբանանի ասպնջական ափերը:

Ճակտի արդար քիրտով կառուցուած այս տունը կտոր մը Հայաստան է միաժամանակ, զեղուն՝ թարմ եփած սուրճի բոյրով, խինդ՝ դրացուհիներու ամէնօրեայ այցելութիւններով, օծուն՝ հայոց լեզուի եւ հայ հոգիին թոյլք տուող աղօթքներու ինչիւնով: Ծնողքը, խորապէս արմատաւորուած հայեցի աւանդոյթներու եւ հաւատքի մէջ, վառ կը պահեն իրենց ծննդավայրին՝ Թոմարզայի, տոհմիկ մշակոյթն ու լեզուն, ոչ թէ ջղուտ ջանքերու, այլ ապրուած ջերմութեան, սրտբացութեան եւ այդ տան մէջ տիրող լուռ ինքնավստահութեան միջոցով, ուր միշտ սրտբաց տեղ մը կայ այցելուներուն:

Այո, Մահակ աղային է տունը, սակայն այս տան սիւնն է հեղինակին մայրը՝ տիկին Մարիամը, որ իր ամբողջ կեանքը նուիրած է իր ընտանիքին եւ զաւակներու ծառայութեան: Մէկը, որ իր շատ երիտասարդ տարիքին տեսած էր տարագրութիւնն ու մահը, հագած էր որբութեան կրակէ շապիկը, կեանքին հասած է Անթուրայի եւ Ղազիրի որբանոցներուն մէջ, բայց կրած էր իր մէջ հաւատքը, որ ցեղասպանուելու դատապարտուած իր ժողովորդի ապագան լաւ, խոր արմատներ ունեցող հայ ընտանիքներու շարունակական գոյութեան մէջ կը կայանայ: Այս համոզումը ներթափանցած է իր ամբողջ էութեան մէջ: Յեղասպանին դէմ իր լուռ վրէժին իրագործումը ան երդւած է տեսնել այն կեանքներուն մէջ, որ իր ծոցէն ծնած ու սնած են մարդիկ, որոնք հայօրէն պիտի ապրին եւ բարձր պիտի պահեն ցեղին անմար ջահը քաղաքակիրթ աշխարհին մէջ:

«Տիկին Մարիամ», «Մարիամ ճէճէ», «Մարիամ քոյրիկ» թէ «Մարիամ տուտու», ինչպէս ալ որ զինք կոչած են թաղեցիներ, միեւնոյնն է, պարզ կին մըն է ան՝ թէկուզ առանց բարձրագոյն կրթութեան, բայց կնոջ մը մայրական բնագղն է, որ զինք կը դարձնէ տիրական, գորեղ՝ քան իւրաքանչիւր գիտական տեսութիւն: Խոնարհութիւնը իր բարոյական վեհութեան յատկանիշն է, կապուածութիւնը իր հայրենի աւանդոյթներուն հայեցի պատկանելիութեան դրոշմն է, ջերմեռանդութիւնը եւ Աստուծոյ հանդէպ երկիւղը՝ իր իմաստութեան պենձախօս վկայութիւնը: Այս բոլորը իրենց հետքը ձգած են իբրեւ նուրբ, բայց անջնջելի կնիք իր զաւակներու սիրտերուն վրայ՝ կերտելով անոնց մէջ գերազանցապէս մարդը, իր շրջապատին մէջ յարգանք պարտադրող նկարագիրը: Մէկ խօսքով՝ հեղինակի մօր՝ տիկ. Մարիամի, ամէնօրեայ զոհաբերութեան մէջ թաքնուած էր այն անտեսանելի մեծութիւնը, որ ո՛չ կրթութիւնը, ո՛չ ալ հարստութիւնը կրնան սորվեցնել արժանապատիւ կեանքը փոխանցելու արուեստը:

Գիրքին մէջ շատ մը դէմքեր կը տողանցեն, կը նշուին շատ մը իրադարձութիւններ, որոնք կապ ունին այդ ժամանակաշրջանի պատմութեան հետ: Շատ մը հպարտալի ձեռքբերումներու, եկեղեցիներու, դպրոցներու, ակումբներու եւ այլ կառոյցներու, նաեւ գուցէ աւելի քան տասնեակի մը հասնող մամուլի տպագրութեան արդար սխրագործութիւններուն առընթեր, կան մատակարար անկումային իրավիճակներ, որոնց մէջ ամենացաւալին 1958-ին ծայր առած ինչպէս-դաշնակ հակամարտութիւնն էր՝ եղբայրասպան կռիւր, որ ոչ մէկ օրհնութիւն բերաւ լիբանանահայութեան: Սակայն ամէն չարիք կը ծնանի նաեւ բարիք մը. գուցէ այս դառն փորձառութիւնը պատճառ դարձաւ այն խոհեմութեան, որ 1975 թուականին Լիբանանի մէջ բռնկած քաղաքացիական պատերազմին հայկական բոլոր քաղաքական կուսակցութիւնները, եւ ընդհանրապէս հայութիւնը, միակամ որոշեցին չէզոք դիրքորոշում որդեգրել արիւնալի կռիւներուն, բայց եւ անվերապահ պատրաստակամութիւն յայտնեցին սատար հանդիսանալու իոն, ուր կար թէկուզ նուազագոյն առկայծ մը կողմերուն միջեւ կայացնելու համար հաշտութեան եւ խաղաղութեան պայմանագիր մը:

Վերոգրեալ նշեցի՝ «Մեր տունը» հատորին մէջ տողանցող բազմաթիւ դէմքերուն մէջ կը յիշուի նաեւ անձնաւորութիւն մը, որ պատմութեան մէջ դժբախտաբար իր տեղը կը գրաւէ անարգ գործով՝ Մաղաքիա արք. Օրմանեանի դէմ կատարած ահաբեկչութեամբ: Դէպքը տեղի կ'ունենայ 6 յունուար 1906 թուականին, Ս. Ծնունդի պատարագի սկիզբը, տակաւին Գումգաբուի մայր եկեղեցւոյ դասուն մէջ կատարուած խնկարկութեան թափօրի ընթացքին: Օրմանեան սրբազանին վրայ ատրճանակէ արծակուած երեք փամփուշտներէն առաջինն է, որ կը խոցէ ուսը՝ բարեբախտաբար անցնելով մէկ կողմէն միւսը, առանց ոսկրային բեկում կամ քիչ վար՝ թոքին որեւէ վնաս հասցնելու: Ահաբեկիչը կարնեցի Յակոբ Խաչիկեանն էր, դեղագործական ուսմանց հետեւող մը, որ անդամագրուած էր Հ.Յ.Դ.-ի շարքերուն: Ան իսկոյն կը զգետնուի բարապան Պօղոս Սրապեանի կողմէ, որ դասին ձախակողմեան դուռը կը հսկէր: Ահաբեկիչը, ինչպէս նաեւ իրեն սատարող չորս ընկերներէն երեքը կը ձերբակալուին: Վերջիններս բանտարկութեան, իսկ Յակոբ Խաչիկեան մահապատիժի կը դատապարտուին: Սակայն մահավճիռը չգործադրուած, նոյնիմըն Օրմանեան պատրիարքի բարեխօսութեամբ, վճռաբեկ ատեանէն մահապատիժի ներում կը տրուի՝ զայն վերածելով ցմահ բանտարկութեան:

ԴՈՎՏ. ԱՐԷԼ. ԶՀՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

1908 թուականի երիտթրքական այսպէս կոչուած յեղափոխութենէն եւ սուլթան Ապտիլ Համիտ Բ.-ի գահընկեցութենէն ետք, 1909 թուականին շատ մը բանտարկեալներու հետ Յակոբ Խաչիկեանն ալ ազատ կ'արձակւի, որ իր մասնակցութիւնը կը բերէ 1915 թուականի Վան մտնող կամաւորներու ջոկատին, աւելի ուշ՝ Մարդարապատի հերոսամարտին: Սակայն ճակատագրի ալիքները զինք կը հասցնեն Պէյրութ, ուր իր հէգ կեանքին մայրամուտը կ'անցընէ բնակելով Պուրճ Համուտի իր գործատիրոջ տան սանդուխին տակ՝ նեղիկ խուցի մը մէջ:

Պատկառելի հիւր մըն է ան Մարկոսեաններու յարկէն ներս՝ ի վերջոյ կեանքը զոհած հայրենասէր մարտիկ մը, որուն վիճակաձգութեամբ բախտ վիճակուած էր իրականացնելու կուսակցութեան վճիռը՝ Օրմանեան սրբազանը ահաբեկելու ուղղութեամբ:

Հայոց պատմութեան մէջ շատ չեն եղած այն դէմքերը, որոնք փայլած են դիւանագիտութեան տաղանդով: Եթէ երբեք եղած են, ապա այդ քիչերուն մէջ անտարակոյս պէտք է նշել Օրմանեան սրբազանը, որ արիւնկալ սուլթանը իր հաւասարակշիռին տալ առնել փորձելով՝ կ'աշխատէր, ըստ կարելոյն, ազգին առաւելութիւնները ապահովել: Եւ ճիշդ ասոր համար է, որ պատմութիւնը իրեն «զազանագուսպ» մակդիրը տուած է: Սակայն հայ յեղափոխական կուսակցութեանց բռնատիրութեան դէմ արդար պայքար մղելը ժամանակի հրամայականն էր, հետեւաբար երկու հեղինակութեանց՝ կուսակցութեան եւ Օրմանեան սրբազանի գործելաոճը իրարմէ միանգագամայն կը տարբերէին՝ տեղի տալով հակասութիւններու եւ թշնամանքի, որ իր աւարտին կը հասնի Օրմանեան սրբազանի դէմ ահաբեկչական ձախորդ վճիռը իրականացնելու գործողութեամբ:

Յակոբ Խաչիկեան իր արարքը հետագային որակած է իբրեւ «երիտասարդական տաքարիւն սխալ»: Սակայն պահ մը պատկերացուցէք, որ եթէ երբեք այդ «սխալը» իրականանար եւ Օրմանեան սրբազան տեղն ու տեղը կնքէր իր մահկանացուն, ապա Հայ եկեղեցին եւ ազգը զրկուած պիտի ըլլային այն եզակի աշխատասիրութիւններէն, որոնք արգասիքն են այս մեծ Հայուն, հոս պարզապէս նշելով անոնցմէ միայն քանի մը հատը՝ «Հայոց եկեղեցին», «Համապատում», «Խոհ եւ խօսք» եւ «Ազգապատում» եռահատորը:

Արդարեւ, պետութիւններ նոյնիսկ իրենց առած որոշումներուն մէջ կրնան սխալիլ, քաղաքական կուսակցութիւններ նոյնպէս: Եկեղեցին միակն է, որ կը վարդապետէ, թէ ինք իբրեւ աստուածային հաստատութիւն անսխալական է. թերեւս... Սակայն Եկեղեցւոյ պատմութիւնը մէկ փաստ յստակ ու մեկին դարձուցած է, որ եթէ Եկեղեցին իբրեւ աստուածաբանական յղացք անսխալական է, ապա ստոյգ անսխալական չէ իր վերնախաւը: Անսխալականութիւնը բացառապէս աստուածային ստորոգելի է, իսկ մարդու պարագային անսխալական ըլլալը գերմարդկային, աւելի ճիշդը՝ անմարդկային ըլլալ կը նշանակէ:

«Մեր տունը» տեսակ մը վաւերական պատմութիւնն է Պուրճ Համուտի հայութեան՝ անոր գոյատւոման եւ զարգացման: Ան կը հաւաստէ, որ ատենին անոր բնակիչներուն ճնշող մեծամասնութիւնը հայեր էին հայութեան այն մնացորդացէն, որ պիտի շարունակէր իր կեանքին գոյերթը արեւելեան Պէյրութի այս շրջանին մէջ՝ կազմելով նոր բնակավայրեր իրենց նախկին շէներու եւ աւաններու ամունները տալով անոնց՝ Նոր Մարաշ, Նոր Ատանա, Նոր Սիս, Նոր Ամանոս, Նոր Թոմարզա եւ այլն: Փաստօրէն Պուրճ Համուտ բազմատարր հասարակութենէ կազմուած բնակավայրի մը խճանկարն էր, որ միայն եւ ամբողջական մէկ պատկեր կը ցուացնէր՝ Կիլիկիոյ հայութեան անյեղի դիմանկարը:

«Մեր տունը» ստեղծագործութեան ամենատպաւորիչ առանձնայատկութիւններէն մէկն ալ հեղինակի ծնողքին խօսած Թոմարզայի հայերէն բարբառն է, որ ամբողջութեամբ վերաբախուած է գիրքին էջերուն մէջ: Այս լեզուական կենսունակութիւնը ոչ միայն ստեղծագործութեան կը հաղորդէ մասնաւոր արժէք մը, այլեւ դուռ կը բանայ դէպի աշխարհ մը, որ, հազար ափսոս, սփիւռքահայ կեանքին մէջ հետզհետէ աւելի կը դալկանայ, ընդհուպ մինչեւ սպառում եւ ի վերջոյ՝ կորուստ: Հայ սփիւռքը օտար երկինքներու տակ կ'անգամաձուլման, կենսակերպի փոփոխութիւններու, գերիշխող մշակոյթներու եւ լեզուներու յարմարելու ճնշման ներքոյ՝ աստիճանաբար կը կորսնցնէ այս արժէքաւոր գաւառաբարբառներէն շատերը: Զորօրինակ՝ հաճընցիներ չկրցան պահել այն լեզուն, որ տարրուսեան Հաճընի մէջ կը խօսէին իրենց տատերն ու պապերը: Այնուամենայնիւ, ճիշդ այս բարբառներն են, որոնք կը մարմնաւորեն մեր մայրենիին հարստութիւնն ու բազմազանութիւնը՝ պահպանելով յիշողութիւններ, մտածելակերպ եւ արտայայտուելու ձեւեր, որոնք դժուար թէ արտացոլացնէ գրական լեզուն թէ՛ արեւմտահայերէնի եւ թէ՛ արեւելահայերէնի պարագային: Իւրաքանչիւր բարբառ հայ ինքնութեան բաղկացուցիչ մէկ մասը կը կազմէ, կը շարունակէ սերունդներու միջեւ կապը, նաեւ՝ աւանդութեան եւ մեր միասնական պատմութեան հետ: Հետեւաբար առաւել եւս կարեւոր է պահպանել այս լեզուական գանձերը, փաստագրել զանոնք եւ, ամէն բանէ առաջ, շարունակել զանոնք խօսիլ առօրեայ կեանքի մէջ, որպէսզի անոնք ոչ միայն մնան անվերադարձ անցեալի մը յուշը, այլեւ ունենան կենսունակ ապագայ:

Յաւարտ բանիս, թող արտօնուած ըլլայ ինձի սրտանց շնորհաւորելու հատորիս հեղինակը գրական իր անդրանիկ երախայրիքին առթիւ, եւ ինչպէս իր սիրասուն մայրիկը երկնից լուսակարկառ բարձունքէն թոմարզայի բարբառով պիտի ըսէր.

«Մեղա՛, տն՛ս եաւրում, ըստեղ ի՛նչ գեղեցիկ գիրք կիրած ես»:

Շնորհակալութիւն:

Պէյրութ, 5 դեկտեմբեր 2025


(Ծար. 2 եւ վերջ)

ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ-ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ.
ՀԱՅ ԳՐՈՂԻՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝
ԲՈՂՈՔԱԳԻՐԻ ՄԸ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ
Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

Հայ գրողի հասկեւ. ապրիլ բացառապէս իբրեւ գրող՝ առանց «կցողը» փնտռելու «գրող»-ին: Ա. Շ.

Կը կարդամ Նշան Պէշիկօշլեանի՝ Անդրանիկ Ծառուկեանին ուղղած 4 Սեպտեմբեր 1960 թուակիր նամակը, որ, ի շարս ուրիշ նամակներու՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան արխիւատուներն ձեռք ձգուած, անտիպ է եւ պիտի հրապարակուի «Հայկազեան հայագիտական հանդէս»-ի ընթացիկ տարուան մայիսեան հատորին մէջ: Այս պատճառով ընդամենը հատուածներ պիտի մէջբերեն անկէ եւ ո՛չ ամբողջական նամակը:

Նախ եւ առաջ պէտք է նշեմ, որ Պէշիկօշլեան եղած է ամենակարեւոր աշխատակիցներէն Ծառուկեանի «Նայիրի» ամսագիրի (Հալէպ), այնուհետեւ՝ շաբաթաթերթի (Պէյրութ): Աշխատակցած է գրական բազմաթիւ սեռերով: Առատ եղած է հունձքը՝ յար եւ մման Բաֆֆիի, Յ. Պարոնեանի, Ե. Օտեանի հունձքին, մանաւանդ, որ ինչպէս նշեալ անունները, այնպէս ալ ինքը, չունենալով որեւէ պաշտօն, ստիպուած էր ապրելու իր գրիչով:



Արդ, խնդրոյ առարկայ նամակը բողոքագիր մըն է: Պէշիկօշլեան կը բողոքէ.

«Ամիսներէ ի վեր կը սպասեմ դրամի, իսկ դուն կը պահես թար լռութիւն»:
Ան բազմաթիւ գրութիւններ դրկած է «Նայիրի»-ին՝ առանց ստանալու ամօնց պատուագինը: Անձամբ ինձի համար սա քիչ մը խորք կը հնչէ, որովհետեւ Ծառուկեան ընդհանրապէս չէ թերացած այս հարցին մէջ. վկայ այն նամակները, որոնք հասցեագրուած են ֆրանսահայ ուրիշ կարեւոր անունի մը՝ բանաստեղծ ու արձակագիր Նիկողոս Սարաֆեանին՝ 1938-էն 1948-ի միջեւ: Օրինակ՝ վերջինիս ուղղուած 17 Մայիս 1947 թուակիր նամակին մէջ (Արքիւր Շէնեան, «Անդրանիկ Ծառուկեանի նամակները Նիկողոս Սարաֆեանին (1947–1958)», «Հայկազեան հայագիտական հանդէս», 2024, հտր. 2, էջ 349) հետեւեալը կը գրէ Ծառուկեան.

«Չեմ գիտեր թէ որ սմանդուկ խլորդն [է] որ «զգուշացուցեր է քեզ թէ կրնայ խոստացուած վճարումը չկատարուի, բայց կը մտածեմ թէ ձեր միջավայրը բաւական լորճուած ըլլալու է եւ մտաւորականութիւն կոշտած խմբակը բաւական այլասերած» որպէսզի անոնցմէ մէկն ու միւսը կարենայ մտածել թէ հայ գրող մը կրնայ ուրիշ հայ գրողի մը իրաւունքը իւրացնել: Ներքակ կը ստանաս 1500 ֆր.: Փոխան 1200-ի»:

Կը խոստանայ նաեւ ամէն ամիս 1000 ֆրանք յաւելեալ դրկել՝ անկախ Սարաֆեանի աշխատակցութենէն՝ «պարզ իբրեւ եղբայրական օգնութիւն»:

Ու նամակը կ'աւարտէ իրեն յատուկ գուարթախոտութեամբ մը. «Ճոռտովանիմ, թէ բողոքովին մարտը ակէ չի գար որոշումն եւ որոշ դեր մը ունի[ն] նաեւ անժամօք խլորդդները... նախանձիկ տալու չարախիմըդ զոհունակութեամբ»:

Այնուամենայնիւ, սա չի կրնար հիմք հանդիսանալ հերքելու կամ աւելորդ համարելու Պէշիկօշլեանի բողոքը, որ լիովին տեղին է ու արդար, նկատի առնելով, որ ո՛չ միայն «ապրուստը տարապայման տլած է» Ֆրանսա, ինչպէս կը նշէ նամակագիրը, այլ նաեւ այն, որ վերջինս գրող է, սիրուած ու յարգուած գրող, եւ որ գրողն ու մուրացկանը որպէս հոմանիշներ ընդունելու սովորութիւնը ուղղակի արատաւոր է ու ի վնաս մեր գրականութեան: Պէտք է հասկնալ, որ ապրուստի բազմատեսակ մտահոգութիւններով պաշարուած ու զգետնուած մարդը ի վիճակի չի կրնար ըլլալ հետեւողականօրէն արտադրելու եւ հրատարակելու, ինչպէս որ յաճախ կը սպասուի իրմէ: Ան ի՞նչ կրնայ ընել առաւելագոյնս,– պարբերաբար երեւի մամուլին մէջ՝ մնացեալ ժամանակը կամայ-ակամայ յատկացնելով կեանքի դաժան մաքառումին:

Ահաւասիկ այդ մաքառումին տարողութիւնը Պէշիկօշլեանի համար.
«Ամէն ինչ ծախս է: Ամէն ինչ կարօտ է դրամի: Պէտք է վճարեն պարտքեր, կատարեն մանր-մունր ծախսեր ու գնումներ, իսկ կառավարական տնօրէնրու եւ սենեակի վարձքին համար պէտք է որոշ գումար ձգեն այստեղ»:

Աւելի քան խիզախութիւն ու սխրագործութիւն է ապրիլ Ֆրանսայի մման սուղ երկիր մը՝ ապաւինելով ընդամենը պատուավճարներու: Յաւօք, իրողութիւնը այն է, որ ո՛չ այդ թուականներուն, ո՛չ ալ հիմա չէ եղած ու չկայ գրական դաշտի լուրջ համակարգուածութիւն, որով եւ գրողը կարենար ինքզինքն ապահովել: Ուստի հերթական վարձատրութեան նախապայմանը ինքնըստիներեան սահմանուած է նոր գրութեան մը հրատարակութիւնը: Առ այս գրողը տեսական ստիպողութեան տակ է հաց թխելու պէս գրութիւն թխելու, ինչը, սակայն, լուրջ սպառնալիք է անոր որակին ու արժէքին: Այս պարունակին մէջ մեղաւորը գրողը չէ անշուշտ, քանի որ գրական դաշտի համակարգային յաջողութիւնը կախած չէ բացառապէս իրմէ, այլ նաեւ գրական հիմնադրամներէ ու գրահրատարակիչներէ, որոնք ռազմավարականօրէն պիտի նպաստեն տուեալ դաշտի ձեւաւորման ու պտղաւորման:

Առ ի չզոյժ նշեալ դերակատարներուն՝ գրողը ուշ կամ կանուխ կը հարկադրուի խորհելու նոր ուղիի մասին՝ չդիմանալով անհեթեթ ու ապարդիւն սողցումին:

Պէշիկօշլեան բացառութիւն չէ: Ահա թէ ինչ կը գրէ նոյն նամակին մէջ.

«Եթէ այս նամակիս դրական պատասխան մը չտաս, ամէն, ամէն ինչ քանդած կ'ըլլաս: Այնքան զգուած եմ ու վիստած՝ այս դրամ ուզելու հոգեկան պտղնկութենէն, որ կը մտածեմ մեռնելու գնով հրաժարիլ գրելէ»:

Ինչո՞ւ գրելու արարքը այսքան անուժ է կեանքի գուպարին մէջ, այսքան ապագղեցիկ:

Յանուն անկեղծութեան ու արդարութեան պէտք է ըսել, որ թէւ հայ գրողի կարգավիճակը ընկերային բարձր դիրք ու միութեան բարեկեցիկ կեանք չ'ապահովեր, բայց առնուազն յարգանք կը պարտադրէ ու վստահութիւն կը ներշնչէ

ընկերութեան մտաւորական խաւին ու ընթերցող շրջանակներուն մէջ:

Ճիշդ է նաեւ, որ ան կրնայ փրկել ծանր հիւանդութեան պատճառով անգործութեան մատնուած գրողը, ինչպէս փրկուած է Պէշիկօշլեան 1953-ին: Այդ ժամանակ վերջինս անկողին ինկած էր: Ուստի չէր կրնար աշխատակցիլ թերթերուն: Միով բանիւ՝ գրկուած էր իր եկամուտի աղբիւրէն: Այս առթիւ կոչ մը հրապարակուած է «Նայիրի»-ի 29 Մարտ 1953-ի թիւին մէջ՝ ստորագրութեամբ Ջ. Գազազեանի, Ն. Սարաֆեանի, Մ. Պարսամեանի եւ Ա. Խանէտանեանի, որով ամէն ոք կը հրաւիրուի մասնակցութիւն բերելու կազմակերպուած հանգանակութեան:

«Միքելի Հայրենակից, Գիտենք թէ ինչ գրկանքներու եւ դժուարութեանց կը մատնուի հայ գրողը, եթէ դատապարտուած է իր գրչի աշխատանքովը միայն հայթայթել իր ապրուստը: Ո՞ր Հայը տեղեակ չէ այս տխուր իրողութեան:

Հակառակ այս աննպաստ կացութեան, կը գտնուին դեռ գրականութեան նուիրածներ, որոնք, անգօսնելով այդ անբաղձալի վիճակը, հաճոյքով եւ մեծ հաւատքով մանաւանդ զոհած են ու կը զոհեն իրենց կեանքին լաւագոյն մասը, յանուն մեր մշակոյթին:

Անհերքելի տարանդով օժտուած ուխտեալ այդ վաստակաւորներէն մէկն է Պ. Նշան Պէշիկօշլեան, որ տարիներէ ի վեր, իր գրչով եւ երկու տասնեակի հասնող հատորներով նպաստած է հայ գրականութեան ճոխացման, կուրծք տալով միշտ բոլոր նեղութիւններուն:

Դժբախտաբար ան այսօր կը գտնուի անել եւ անօգնական վիճակի մը մէջ, ծանր հիւանդութեամբ մը զգետնուած: Հետեւաբար, անկարող ըլլալով իր գրական ստեղծագործութիւնը շարունակելու, մատնուած է միութեան անձուկ վիճակի:

Մենք, գրչի իր եղբայրակիցները, անյետաձգելի պարտականութենէ թելադրուած եւ գրագէտին անմիջական օգնութիւն մը հասցնելու մտահոգութեամբ, ինչպէս ուրիշներու, ձեր ալ աջակցութեան կը դիմենք:

Վստահ ըլլալով, որ սիրով պիտի բերէք ձեր միութեան օժանդակութիւնը, կանխաւ կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

Յ. Գ.– Նուէրները դրկել հետեւեալ հասցէին՝
LIBRAIRE M. BARSAMIAN
46, Rue Richer. Paris (9e)
Կամ «Նայիրի»-ի խմբագրութեան:

Հանգանականութեան տուեալ կոչը, ինչքան ալ կարեւոր ու օգտակար, չի կրնար վարագորել հայ գրական մշակներու նկատմամբ ցուցաբերուած բարձիթողի վերաբերումը: Ամօթալի է, որ Պէշիկօշլեան, հակառակ իր երկարամեայ գրական վաստակին, անօգնական վիճակի մէջ է զինք զգետնած հիւանդութեան առջեւ եւ կարիքը ունի գրչընկերներուն հրապարակած կոչին ու սրտցաւօրէն անոր ընդառաջած նուիրատուներուն, որպէսզի աւելի դիւրին յաղթահարէ այս շրջանի միթական անձուկ պայմանները: Մինչդեռ...

Հանգանակութիւնը, այո, յաջողապէս կայացաւ. ինչպէս կ'իմանանք «Նայիրի»-ի 5 եւ 12 Ապրիլ 1953-ի թիւերէն, թերթին պատասխանատու տնօրէնը՝ Մարք Տօմիկեան, Թրիփոլիի հայ մշակութային երկսեռ միութիւնը եւ ուրիշներ՝ անհատ կամ միութիւն, մասնակցած են հանգականութեան: Ի վերջոյ բուժուած է Պէշիկօշլեան, վերադարձած իր ստեղծագործական աշխատանքին: Բայց եւ այնպէս հանգանակութիւնը փրկողակ չէ դարձած ու անտարակոյս պիտի չդառնար: Ծառուկեանին ուղղած խնդրոյ առարկայ բողոքագիրը կու գայ մատնանշելու այն բոլոր ռազմավարական ու կազմակերպչական բացթողումները, որոնք սկզբունքով պէտք է ուղղուէին ու ինքնաբերաբար կանխէին գոյառումը նմանօրինակ բողոքագիրներու:

Սակայն չեն ուղղուած: Յաւ ի սիրտ, եօթանասուն երեք տարի ետք հայ գրականութեան այս հիմնախնդիրը տակաւին կը մնայ չլուծուած:

Ի տարբերութիւն Պէշիկօշլեանի ժամանակաշրջանին՝ ներկայիս դժուար թէ կարելի ըլլայ գտնել իրենց աշխատակիցները վարձատրող թերթեր: Պատուավճարի երբեմնի աւանդոյթն ալ համարեա վերացած է: Ի հարկէ տրամաբանական ալ չէ որպէս գրող միութեան մասնաւոր ակնկալութիւն սնուցել զիրքերու վաճառքէն:

Ի՞նչ կը մնայ ընել մեզի: Թէւ այս հարցը համահայկական բնոյթ կը կրէ, սակայն որպէս սփիւռքցի,– ուստի եւ՝ աւելի ծանօթ սփիւռքեան դրուածքին ու խոհանոցին,– առաջարկիս մէջ նկատի պիտի առնեմ ընդամենը թնճուկաւոր Սփիւռքը:

Նախապէս առաջարկած էի ստեղծել Սփիւռքահայ գրողներու դրամական ֆոնտ մը, որ ամսական յատկացումներ կը կատարէ սփիւռքահայ կայացած թէ խոստմնալից գրողներու՝ անոնց առիթ տալով զբաղելու բացառապէս ստեղծագործական աշխատանքով:

Բացի նմանօրինակ ֆոնտի մը ստեղծումէն՝ կարելոր կը նկատեմ նաեւ վերահաստատումը պատուավճարներու դրութեան՝ որպէս եկամուտի երկրորդ աղբիւրի: Ի վերջոյ գրական կտորի մը հիմնական «զնորդը», անկախ ստեղծագործութեան ժանրէն ու բովանդակութենէն, մամուլն է. կա՞յ մամուլ առանց գիրի, գրատր արտադրութեան,– ուստի երբ մեր մամուլը տնտեսական ամուր հիմներու վրայ դրուի, կրնայ դուրս գալ ձրի գրութիւններ ընդունողի ու տպագրողի կարգավիճակէն, ահա այն ատեն կարելի կը դառնայ վերադառնալ այդ դրութեան:

Արդ, Պէշիկօշլեաններու մշտնջենական տառապանքը ե՞րբ վերջ կը գտնէ: Միմիայն այն ժամանակ, երբ գիտակցուի, որ գրականութեան ոլորտը բաղկացած չէ ընդամենը մէկ հոգիէ, իմա՝ գրողէն, այլ բոլոր այն «խաղավարներէն», որոնք միահամուռ ճիգով կը նպաստեն բնագաւառին առողջ ու ողջմիտ համակարգուածութեան, կազմակերպւածութեան ու հաստատութենականացման՝ դուրս բերելով զայն նուաստացուցիչ սիրողականութենէ:

Նաքքաշ, 7 Յունուար 2026

ՀԱՅՈՒԿԻ ԿՐԵՅՍ ԷՅՏԻՆԵԱՆՅԸ՝ ԼՈՆՏՈՆԻ ՇԵՐԼՈԿ ՀՈԼՄՍԻ ՏՈՒՆ- ԹԱՆԳԱՐԱՆԻ ՏԻՐՈՒԿԻ


**Պարզում է, որ աշխարհահռչակ դէտեկտիվ տուն-թանգարանը
հիմնել են հայերը...**

Կրեյս Էյտինեանցը՝ լեգենդար գրական կերպար, *դէտեկտիվ* Շերլոկ Հոլմսի լոնդոնեան տուն-թանգարանի հիմնադիրը, ծնունդ է 1927 թուականի օգոստոսի 24-ին Լոնտոնում՝ հայ ներգաղթեալների ընտանիքում։ Էյտինեանցի ծնողները Հայոց ցեղասպանութեան տարիներին Օսմանեան կայսրութիւնից



փախել են Ռուսաստան, իսկ աւելի ուշ տեղափոխուել Մեծն Բրիտանիա։ 1990 թուականին երեք երեխաների մայր Կրեյս Էյտինեանցը, լինելով Շերլոկ Հոլմսի արկածների մասին Արթուր Կոնանդոյի ստեղծագործութիւնների երկրպագուն, վաճառեց սեփական տունը եւ բոլոր միջոցները ներդրեց Պէյքըր սթրիթ 221B յայտնի հասցէում տուն գնելու համար, որտեղ, ըստ ստեղծագործութիւնների, Շերլոկ Հոլմսը եւ նրա ընկերը՝ դոկտոր Ուոթսոնը, ապրել են 1881-1904 թուականներին։ Էյտինեանցը այնտեղ հիմնել է տուն-թանգարան։ Չնայած այն հանգամանքին, որ այս տան վարձակալը գեղարուեստական կերպար է, այս հասցէում գտնուող շէնքը պետութեան կողմից ընդգրկուած է ճարտարապետական եւ պատմական արժէք ներկայացնող շէնքերի ցանկում, ինչպէս նաեւ նշում է ցուցանակով, որով աւանդաբար նշում են պատմական դէմքերի տները։

Շերլոկ Հոլմսի տուն-թանգարանը գրեթէ անմիջապէս գրաւել է բոլոր անգլիացիների, ինչպէս նաեւ զբօսաշրջիկների ուշադրութիւնը. նրա հանդէպ հետաքրքրութիւնը մինչ օրս չի թուլանում։ Էյտինեանցի



ներդրումը նրան հսկայական շահույթ բերեց. կնոջ կարողութիւնը գնահատում էր 20 միլիոն ֆունտ ստերլինկ։ Կրեյս Էյտինեանցի կեանքը բաւական տխուր աւարտ ունեցաւ. 2015 թուականի նոյեմբերի 28-ին 88 տարեկան հասակում կինը մահացաւ տարեցների համար տանը, ինչպէս հաղորդում էր ՋԼՄ-ներում, "կոտորուած սրտից"։ Դրա պատճառը նրա երեխաների՝ Շերլոկ Հոլմսի տուն-թանգարանի համահիմնադիր որդու ու երկու դուստրերի միջեւ ֆինանսական վեճերն են եղել։ Կրեյս Էյտինեանցը երկար տարիներ եղել է նաեւ Լոնտոնի Aid Armenia International բարեգործական կազմակերպութեան տնօրէնը, որի նպատակն էր աջակցել հայ ժողովրդին եւ աշխարհին հասցընել Հայաստանի ողբերգական պատմութիւնը։ Այժմ կնոջ գործը շարունակում է նրա որդին՝ Դոն Էյտինեանցը...

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ս. ՄՆՈՒՆԴԻ ՊԱՏԳԱՄԸ

(Շարունակուած Ա. Էջէն)

Եկէ՛ք, զիրար ողջունենք ըսելով՝ Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ։
Եկէ՛ք, վերանորոգ հաւատքով մեզի համար ծնած Քրիստոսով վերածնինք։

* * *

Եղբայրական ջերմ սիրով կ'ողջունենք Հայ եկեղեցւոյ նուիրապետական արքունեքոյ գահակալները, ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսը, Երուսաղէմի հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Նուրիան արք. Մանուկեանը եւ Կոստանդնուպոլսոյ Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Սահակ արք. Մաշալեանը՝ մաղթելով իրենց քաջառողջութիւն եւ եկեղեցաշէն իրագործումներով հարուստ երկար գահակալութիւն։

Հայրական ջերմ սիրով կ'ողջունենք Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան մեր Թեմակալ առաջնորդները, Ազգային իշխանութիւնները եւ համայնքային կառոյցները՝ իրենց մաղթելով մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի աշխարհ բերած սիրոյ ու խաղաղութեան անփոխարինելի բարիքներով լեցուն օրեր։

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

6 Յունուար 2026
Անթիլիաս, Լիբանան

Under the Auspices of His Grace Bishop Vardan Navasardyan
Primate of the Armenian Church of Australia and New Zealand

TEKEYAN CULTURAL ASSOCIATION
OF SYDNEY, AUSTRALIA

presents

ARMENIAN MUSIC
IN CONVERSATION AND PERFORMANCE

A special concert dedicated to the Prince of Armenian Poetry
Vahan Tekeyan

featuring

UCLA Professor and acclaimed violinist
MOVSES POGOSSIAN

with renowned pianist
VATCHE JAMBAZIAN

SUNDAY 8 FEBRUARY 2026 6:00PM

ST ANNE'S ANGLICAN CENTRE AUDITORIUM
42 CHURCH STREET, RYDE

Free admission. Donations welcome.

For more details, contact
Lucie - 0405 696 362 **Arek** - 0423 886 606

Parking available under the premises

ԹՈՂ ԲԱՐԻՆ ԲԵՐԻ ԱՅՍ ՆՈՐ ՏԱՐԻՆ ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻՆ

(Շարունակուած 2-րդ էջէն)

Իսկ այն, որ երբեմն ասում է, թէ սուվերեն պետութիւն ենք եւ մենք պետք է տնօրինենք մեր ճակատագիրը, այնքան էլ միանշանակ չէ։ Սուվերեն պետութիւն լինել դեռ չի նշանակում, որ ինչ ուզես կարող ես անել, այլ նշանակում է, որ պետք է կարողանաս գիտակցել քո շահերն ու հնարատր բոլոր ճանապարհներով պաշտպանես դրանք՝ ի շահ սեփական ժողովրդի բարօրութեան։ Սուվերեն պետութիւն ունենալ նշանակում է՝ դու ունես սխալուելու սուվերեն իրաւունք, սակայն երբեք չպետք է օգտուես սխալուելու քո իրաւունքից։ Այնպէս որ, Հայաստանում սեփական պետութիւնը հզօրացնելն ու սոցիալական արդարութիւնն այլընտրանք չունեն։ Քանզի մարդիկ արդարութիւն են ուզում, որ մարդն ապրի իր աշխատածով, ոչ թէ մի քանիսը անարդարութեան միջոցով շքեղ կեանք վարեն, իսկ մեծ մասը գոյատեւի։ Արդ հարկատու է հզօրացնել մեր Հայրենիքը՝ հայոց բնաշխարհիկ երկիրը, որ լինի ազգի հաւաքականութեան, ազգային մտածողութեան ու հոգեւոր ներուժի ակունքն ու յենարանը։ Այս տեսլականը, նպատակներն ու ձգտումները թող առաջնորդեն մեզ եւ ուղղորդեն մեր քայլերը, որպէսզի այսօր մենք եւ վաղը մեր գաւակները կարողանանք անվտանգ պահպանել հայրենի մեր երկիրը, զարթոնքով լեցուն հայ կեանքը եւ զօրատր՝ հայի աղօթքը։

Ամենավերջում ուզում եմ ընդգծել, որ Հայաստանում Ամանորն այլեւս տօն չէ. դա սոցիալական ու տնտեսական հայելի է։ Տնից դուրս նշելը մէկ ընտանիքի համար արժէ մօտ կէս միլիոն դրամ։ Տանը նշելը՝ 250–300 հազար դրամ, ու դա՝ առանց հանգստի, առանց ծառայութեան, առանց վայելքի։ Մենք ստեղծել ենք կեղծ ընտրութիւն՝ կա'մ քանկ «հանգիստ», կա'մ էժան թուացող, բայց իրականում նոյնքան ծանր «տնային տօն»։ Խնդիրը սեղանը չէ, խնդիրը մտածողութեան մէջ է. մենք փողը ներդնում ենք ուտելիքի մէջ, ոչ թէ փորձառութեան, հանգստի, ապրելու որակի։ Շուկան գործում է «տօն է՝ գինն ինչ ուզենք կը դնենք» սկզբունքով։ Պետութիւնը՝ դիտորդի դերում։ Աշխատավարձը՝ դուրս մնացած իրականութիւնից։ Ամանորը Հայաստանում դարձել է սոցիալական յարկ՝ վճարում ես, որպէսզի «նորմալ երեւայ»։ Երբ տօնը դառնում է պարտադրանք, ուրախութիւնը դառնում է ձեւական։ Եւ սա արդէն ոչ թէ ընտանեկան, այլ տնտեսական ու արժեհամակարգային ճգնաժամի ցուցիչ է։ Սա մեր պետութեան իրական վիճակի հայելային արտացոլանքն է։

Երեւան
5.01.2026

ՀԱՄՏՔ ԵՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

(Ծարունակուած 7-րդ էջէն)

Վեհափառ Տէրը աշխատած է կամուրջներ կառուցել քրիստոնէական դաւանանքներու եւ համաշխարհային հաւատքներու միջեւ: Իր այցելութիւնները քոյր եկեղեցիներ, հանդիպումները միջազգային ղեկավարներու հետ եւ մասնակցութիւնը համաշխարհային ժողովներու, բարձրացուցած են Հայ Եկեղեցւոյ ձայնը համաշխարհային բեմերու վրայ: 2013-ին ան ընտրուեցաւ համաճախագահ Համաշխարհային Եկեղեցիներու Խորհուրդին, իսկ 2019-ին՝ Պատ-



Վեհափառ Տէրը Էջմիածնի մէջ ընդունած է աշխարհի առաջնորդները, հոգեւոր ղեկավարները եւ միջազգային ներկայացուցիչները: Վերի նկարին մէջ՝ Յովհաննէս Պօղոս Բ. Պապը (Հռոմէական Կաթողիկէ Եկեղեցի) Սեպտեմբեր 2001: Վարի նկարին մէջ՝ Թեովդորոս Բ. Պապը (Աղեքսանդրիոյ Ղափի Եկեղեցի) Ապրիլ 2015:

ւոյ Նախագահ «Կրօնները Յանուն Խաղաղութան» միջազգային կազմակերպութեան, որ կը ներկայացնէ աւելի քան 125 երկիրներ: Բացի ատկէ, Վեհափառ Հայրապետը աշխատած է Վրաստանի, Սիջին Արեւելքի, Ռուսաստանի եւ Արեւմուտքի կրօնական, մշակութային եւ կառավարական հաստատութիւններու պաշտօնատարներուն եւ ներկայացուցիչներուն հետ:

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը անձամբ ճամբորդած է այն վայրերը, որոնք կը կապեն Հայ Եկեղեցւոյ անցեալը իր ներկայի առաքելութեան հետ եւ նոր յարաբերութիւններ կը կերտեն Մայր Աթոռին համար: 2000 եւ 2005 թուականներուն ան այցելեց Սուրբ Երկիր եւ Երուսաղէմի սուրբ վայրերը: Իր 2001-ի այցելութեամբ Վրաստանի հայախոծ Ջաւախքի շրջանը, ան հանդիսացաւ աւելի քան մէկ դարու ընթացքին այդտեղ այցելող առաջին Հայ Կաթողիկոսը: Այս մէկը կը ներկայացնէ վճռակամութիւն մը հասնելու ամեն հայ համայնքի, որքան ալ հեռու ըլլան անոնք: Նոյն տարին, ան ճամբորդեց Տէր Ձօր՝ պատուելու համար Հայոց Ցեղասպանութեան զոհերը: 2007-ին ան այցելեց Սթամպուլ եւ իրապարակայնօրէն վերահաստատեց Ցեղասպանութեան պատմական ճշմարտութիւնը լրագրողներուն առջեւ:

Վեհափառ Տէրը երիտասարդական ծրագիրներ ստեղծեց միացնելու համար հայ երիտասարդութիւնը ամբողջ աշխարհի տարածքին: 2001-ին հիմնուեցաւ Հայ Երիտասարդներու Համաշխարհային Միութիւնը (ՀԵՀՄ), որպէսզի երիտասարդութիւնը ներգրաւուի եկեղեցական կեանքին եւ համայնքային ծառայութեան մէջ: Հայաստանի, Արցախի եւ Սփիւքի մէջ՝ Ամերիկաներէն, Ասիայէն, Եւրոպայէն մինչեւ Սիջին Արեւելք եւ Ռուսաստան, իր գործունէութեամբ, միութիւնը կը դրսեւորէ Գարեգին Բ-ի համաշխարհային պատկերացումը՝ հոգեւորապէս միացնելու հայ ժողովուրդի տեսլականով: Վեհափառ Հօր համար առաջնահերթութիւն եղած է խրախուսել անկեղծ երկխօսութիւնը երիտասարդ մասնագէտներու եւ եկեղեցական ղեկավարներու հետ, համայնքային կարիքներու եւ նախապատուութիւններու աւելի խոր ըմբռնման համար:

Վեհափառ Հայրապետին առաջնորդող փիլիսոփայութիւնը, աւելի քան երեք տասնամեակներու ընթացքին, ձեւաւորած է բազմաթիւ նախաձեռնութիւններ, որոնք կը զօրացնեն կապը Եկեղեցւոյ, հայրենիքին եւ համաշխարհային Հայ Սփիւքին միջեւ: Այդ տեսլականով, Հայ Առաքելական Եկեղեցին կը դառնայ ազգային կեանքի կորիզը, ոչ որպէս պատմական մասունք, այլ որպէս հաւատքի, կրթութեան եւ համայնքային կեանքի գործօն ուժ:

Անգլերէն Բնագիրը հրատարակուած է
AGBU Magazine-ի Դեկտեմբեր 2025-ի թիւին մէջ:
Արեւմտահայերէնի թարգմանեց՝ ԶԱՐԹՕՆԷ:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ «ՊԱՅՔԱՐ»ԻՆ

Գնահատելով «Պայքար»-ի բազմազան ու բազմաբնոյթ բովանդակութիւնը, ուր թերթին մէջ լայն տեղ կը տրամադրէ Թէքեան Մշակութային Միութեան բոլոր գործունէութիւններուն, Թ.Մ.Մ. Կլենտէյլ-Փասատինայի մասնաճիւղը տօնական օրերուն առիթով 200 Ամ. տոլար կը նուիրէ շաբաթաթերթին, մաղթելով յարատեւութիւն:

ԽՏԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՊԱՅՔԱՐ» ԸԱԲԱԹԱԹԵՐԹԻ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ «ՊԱՅՔԱՐ»ԻՆ

Գնահատելով «Պայքար» շաբաթաթերթի ճոխ բովանդակութիւնը, թերթիս մնայուն աշխատակից, յարգուած կրթական մշակ եւ մշակութային գործիչ՝ Տէր եւ Տիկին Միսակ եւ Զարմինէ Պօղոսեաններ (Մերիլանտ), 100 Ամ. տոլար կը նուիրեն շաբաթաթերթին, մաղթելով նորանոր նուաճումներ:

ԽՏԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՊԱՅՔԱՐ» ԸԱԲԱԹԱԹԵՐԹԻ



ՆԱԿԱՐԱԿԱՆԻ

Նոր տարուան նախօրեակին հաճելի անակնկալ ունեցայ:
Պարզում է այնճարում պայքար են կարդում: Երէկ զանգահարեց ու հիւր եկաւ այնճարցի Եսայի Հաւաքեանը: Բաւականին խելացի եւ կազմակերպուած անճարութիւն է: Ասաց, որ երկար ժամանակ իրենց գիւղում, որտեղ հիմնականում դաշնակցականներ են, սակայն «Պայքար»-ին սպասում են անհամբեր: Շէշտեց յատկապէս, որ խմբագրականներին անհամբեր են սպասում: Շատ յուզիչ ու գովաբանական խօսքեր ասաց, որ երկար ժամանակ է փնտռում են դրանց հեղինակին եւ հիմա շատ յուզուած է, որ անճամբ սեղմում է իմ ձեռքը: Չնայած չորդեցի շատ գովէր, բայց խոստովանեմ, որ հաճելի էր: Պարզում է, կուսակցական պատկանելիութիւնն այլեւս խոչնդոտ չէ արժէքաւորն արժեւորելու համար:
Կրկին ուրախ Ամանոր եւ Սուրբ Ծնունդ...

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍԵԱՆ

TEKEYAN CULTURAL ASSOCIATION
MHER MEGERDCHIAN THEATRICAL GROUP
PRESENTS
AN EVENING OF

INSTRUMENTAL
MUSIC

TEKEYAN CENTER
560 SYLVAN AVENUE
ENGLEWOOD CLIFFS, NJ 07632

\$50
*INCLUDING WINE & CHEESE

ENTERTAINMENT BY
HAROUT BARSOUMIAN - *Guitar*
SHANT TANIELIAN - *Violon*
ALICIA KEOSHGERIAN - *Kanon*

LIMITED SEATING

FOR RESERVATIONS CONTACT
MARIE (201) 745-8850
TALAR (201) 240-8541

SATURDAY
FEBRUARY
21, 2026
7:30 PM